

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ա.թ. փետրվարի 1-ից 2-ը Վրաստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը

Դավիթ Անանյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան (ք. Թբիլիսի), 2018 թվականի փետրվարի 1-ից 2-ը:

4. Հրավիրող կողմը

Վարչապետի հանձնարարական

5. Գործուղման նպատակը

Վրաստանի ֆինանսների նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց հետ Հայաստանի և Վրաստանի հարկային համակարգերի շուրջ քննարկումների իրականացում:

6. Քննարկված թեմաները

Վրաստան կատարած երկօրյա այցելության շրջանակներում Վրաստանի ֆինանսների նախարարության պաշտոնատար անձանց, ինչպես նաև «Քեյ-Փի-Էմ-Ջի Վրաստան» խորհրդատվական ընկերության պատասխանատուների հետ կայացել են Հայաստանի և Վրաստանի հարկային համակարգերի շուրջ քննարկումներ՝ վերհանելու համար այն տարբերությունները, որոնցով պայմանավորված երկու երկրների մակրոտնտեսական ցուցանիշները, մասնավորապես հարկային բեռի (հարկեր/ՀՆԱ հարաբերակցության) ցուցանիշները էականորեն տարբերվում են:

Քննարկումների արդյունքում պատրաստվել է հիմնական հարկատեսակների գծով օրենսդրությունների ներքոհիշյալ համեմատական վերլուծությունները:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահութահարկ վճարողները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
----------	---------

Վճարողները՝ անհատ ձեռնարկատերերը, նոտարները, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները.

Վճարողները՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները.

Վրաստանում անհատ ձեռնարկատերերը չեն կարող շահութահարկ վճարող համարվել:

Շահութահարկով հարկման օբյեկտ

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1) ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների.</p> <p>2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը.</p> <p>3) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող անձնական եկամուտների:</p>	<p>1) Ռեզիդենտ ձեռնարկությունների շահութահարկի հարկման օբյեկտները</p> <p>ա) բաշխված շահույթը</p> <p>բ) տնտեսական ծախսերի հետ չկապված ծախսերը կամ այլ վճարները</p> <p>գ) ապրանքների / ծառայությունների անհատույց մատակարարումը և (կամ) դրամական միջոցների փոխանցումը,</p> <p>դ) օրենսգրքով սահմանված սահմանաչափը գերազանցող չափով կատարված ներկայացուցչական ծախսերը:</p> <p>2) շահութահարկի հարկման օբյեկտ է համարվում կազմակերպության՝ 1 օրացուցային տարվա ընթացքում կազմակերպության կողմից ստացված համախառն եկամտի եւ օրենսգրքով նախատեսված նվազեցումների գումարի տարբերությունը:</p> <p>3) Ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, որոնք գործունեություն են իրականացնում Վրաստանում մշտական հաստատության միջոցով պետք է շահութահարկ վճարեն համաձայն վրաստանյան աղբյուրներից մշտական հաստատության միջոցով ստացված համախառն եկամտից՝ նվազեցնելով օրենսդրությամբ սահմանված նվազեցումները:</p>

01.01.2017թ.-ից վերանայվել է շահութահարկի հաշվարկման համակարգը և անցում է կատարվել բաշվող շահաբաժինների հիման վրա շահութահարկի հաշվարկման մոդելին (շահութահարկը հաշվարկվում է, եթե տեղի է ունեցել շահույթի բաշխում):

Միաժամանակ, մի շարք գործունեության տեսակների նկատմամբ շարունակվում է կիրառվել նախկին համակարգը:

Շահութահարկի դրույքաչափերը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>Շահութահարկի հիմնական դրույքաչափը 20 տոկոս է:</p> <p>ՀՀ-ում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է 0.01 տոկոս դրույքաչափով:</p> <p>Հարկման հատուկ համակարգերում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը և նոտարները գործունեության այդ տեսակների մասով շահութահարկը վճարում են ամսական հինգ հազար դրամի չափով:</p> <p>Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.</p> <ol style="list-style-type: none"> 1) ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների մասով՝ 5 տոկոս. 2) պասիվ եկամուտների մասով՝ 10 տոկոս, բացառությամբ սահմանված դեպքերի. 3) ՀՀ աղբյուրներից ստացվող այլ եկամուտների մասով՝ 20 տոկոս: 	<p>Շահութահարկի հիմնական դրույքաչափը 15 տոկոս է,</p> <ol style="list-style-type: none"> 1. «Նավթի և գազի մասին» Վրաստանի օրենքով սահմանված «գործող պայմանագրերի» իրականացման հետևանքով նավթի և գազի արտադրության արդյունքում առաջացած եկամուտը հարկվում է (եթե պայմանագրերը կնքվել են մինչև 1998 թվականի հունվարի 1-ը)-10 տոկոս:

Հաշվետու ժամանակաշրջանը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ՀՀ-ում շահութահարկի հաշվետու ժամանակաշրջանը տարին է:</p>	<p>Վրաստանում կախված շահութահարկով հարկման մոդելից հաշվետու ժամանակաշրջանը տարբերվում է:</p> <ol style="list-style-type: none">1) Բաշխվող շահույթի մոդելի դեպքում՝ ամիս,2) Ոչ բաշխվող շահույթի մոդելի դեպքում՝ տարի:

Շահութահարկի արտոնությունները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ՀՀ-ում շահութահարկից ազատվում են՝</p> <ol style="list-style-type: none">1) Մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ շահութահարկի վճարումից ազատվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները:2) Կենտրոնական բանկ:3) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը հետևյալ եկամուտների մասով:4) «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ստեղծված բյուրոն:5) ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության պետական արտարժույթային պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս գեղջի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:6) ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող շահութահարկ վճարողները՝ ձեռագործ գորգերի իրացումից ստացվող եկամտի մասով:7) ազատ տնտեսական գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ Հայաստանի Հանրապետության տարածքում	<p>Վրաստանում շահութահարկից ազատվում են՝</p> <ol style="list-style-type: none">1) Վրաստանում արտադրված գյուղատնտեսական ապրանքների, մինչև արդյունաբերական մշակումը (ապրանքային կողի փոփոխությունը), նախնական մատակարարումից ստացված շահույթը՝ մինչև 2023 թվականի հունվարի 1-ը Վրաստանում գյուղատնտեսության արտադրության ոլորտում արտադրված ապրանքների նախնական մատակարարումից ստացված շահույթը, եթե այդ անձի կողմից վերոնշյալ մատակարարումից ստացված համախառն եկամուտը մեկ օրացուցային տարվա ընթացքում չի գերազանցում 200 000 լարի (38.000.000 ՀՀ դրամ):2) Վրաստանի Ազգային բանկի ստացած շահույթը:3) Շահույթ, որը ստացվում է միջազգային ձեռնարկության կողմից ազատ արդյունաբերական գոտում իրականացվող թույլատրելի գործունեության տեսակներից:4) Բյուջետային, միջազգային և/կամ բարեգործական կազմակերպությունների շահույթը, բացառությամբ տնտեսական գործունեությունից ստացված շահույթի:5) Ոչ առևտրային կազմակերպության կողմից ստացված դրամաշնորհները,

ստեղծված ազատ տնտեսական գոտում
իրականացվող գործունեությունից ստացվող
եկամտի մասով:

8) ՀՀ պետական կառավարչական հիմնարկները,
ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները,
պետական ոչ առևտրային կազմակերպությունները՝
բյուջետային հատկացումների և ամբողջությամբ
բյուջե փոխանցվող եկամուտների մասով:

Շահութահարկի գումարը նվազեցվում է՝

ՀՀ կառավարության որոշմամբ հավանության
արժանացած գործարար ծրագիր իրականացնող
հարկ վճարողների համար գործարար ծրագրի
շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի
մասով հարկային տարվա ընթացքում
հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան
հավասարեցված վճարումների 100 տոկոսի
չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան
հարկային տարվա համար հաշվարկված
փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

Շահութահարկով հարկման առումով եկամուտ
չեն համարվում՝

1) Մասնակիցների (բաժնետեր, փայատեր,
անդամ) կողմից շահութահարկ վճարողի
կանոնադրական կապիտալում (հիմնադրամում)
կատարված ներդրումները, ինչպես նաև նախորդ
հարկային տարիների հարկային վնասը մարելու
նպատակով մասնակիցների (բաժնետեր,
փայատեր, անդամ) կողմից շահութահարկ
վճարողի սեփական կապիտալի այլ տարրերում
կատարված ներդրումները՝ նախորդ հարկային
տարիների հարկային վնասը չզերազանցող
չափով:

2) Շահութահարկ վճարողի լուծարման մասին
որոշման առկայության դեպքում մասնակիցների
(բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից
շահութահարկ վճարողի սեփական կապիտալում
կատարված ներդրումները:

3) Շահութահարկ վճարողի բաժնետոմսերի,
բաժնեմասերի կամ փայաբաժինների

անդամակցային վճարները և
բարեգործական վճարները:

6) Վրաստանի Առաջնորդարանի կողմից
ստացված շահույթը՝ կապված խաչերի,
մոմերի, սրբապատկերների, գրքերի և
օրացույցների կրոնական նպատակներով
վաճառքից ստացված շահույթի հետ:

7) Վրաստանում ոչ ռեզիդենտի
մշտական հաստատությանը չպատկանող
գույքի վարձակալությունից ոչ ռեզիդենտի
կողմից ստացված եկամուտ:

8) Ազատ լողացող արժեթղթերի
վաճառքից ստացված շահույթ:

9) Միջազգային ֆինանսական
կազմակերպությունների կողմից
ֆինանսական գործարքներից և/կամ
մատուցված ֆինանսական
ծառայություններից և /կամ Վրաստանում ոչ-
ռեզիդենտի կողմից թողարկված
արժեթղթերի վաճառքից ստացված շահույթ:

10) Միջազգային ֆինանսական
ընկերության կողմից թողարկված
արժեթղթերի վաճառքից ստացված շահույթ:

11) Վրաստանյան աղբյուրներից ոչ
ռեզիդենտի կողմից ստացված եկամուտը՝
ելնելով ձեռնարկության կազմակերպության
և /կամ ԱԶ-ի կողմից ռիսկի
ապահովագրությունից և
վերաապահովագրությունից ստացված
շահույթ:

12) Շահույթը, որը ստացված է
կառավարության կամ Վրաստանի Ազգային
բանկի պարտքի պարտավորությունների
արժեթղթերի վաճառքից և վերոնշյալ
արժեթղթերից ստացված տոկոսների
շահույթից և Ազգային բանկում եղած
հաշիվներում ավանդային միջոցներից
ստացված տոկոսներից:

13) Շահույթը, որը ստացվում է ազատ
արտադրության պահեստից ապրանքների
վերաարտահանումից:

14) Շահույթ, որը ստացվում է
ներդրումային ֆոնդի կողմից ֆինանսական
գործիքի և/կամ ֆինանսական
գործարքներից ստացված գործիքի և/կամ

տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը.

4) Շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը, եթե այդ բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայաբաժինները հետ են գնվել օրենքի պահանջով:

5) Այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը.

6) Համատեղ գործունեության մասնակցից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի ստացված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները, եթե սույն կետում նշված գործարքները կատարվում են հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված հայտարարության ներկայացումից հետո.

7) Ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը.

8) Պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը.

9) Հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարները.

10) Հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները.

11) Ոչ առևտրային կազմակերպությունների

ֆինանսական ծառայությունների տրամադրումից, այն դեպքում երբ ներդրումային ֆոնդը հանդիսանում է միջազգային ֆինանսական ընկերություն:

15) Գույքի և ծառայությունների արժեքը, որը անհատույց փոխանցված է

կառավարության և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրավաբանական անձանց, անհատույց տրամադրվող ծառայությունների արժեքը կամ նրանց փոխանցված գույքի արժեքը:

16) Բժշկական հաստատության կողմից ստացված շահույթի մաս (անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից) բժշկական գործունեությունից, որը կիրառվելու է կրկին ներդրումներ կատարելու համար (հաստատության վերականգնում, ֆիզիկական ենթակառուցվածքների սպասարկում և այլն):

17) Վրաստանի տարածքից դուրս տեղեկատվական տեխնոլոգիաների մատակարարումից ստացված շահույթ:

18) Շահույթը, որը ստացվում է զբոսաշրջային գոտում ձեռնարկատիրոջ կողմից հյուրանոցային ծառայություններ մատուցելու արդյունքում՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը զբոսաշրջային գոտում ձեռնարկատիրոջ կողմից ստացված հողակտորի (հողակտորների) արժեքը:

անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները.

12) Ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).

13) Իսադատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտները.

14) Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

15) ՀՀ կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար (օգտին) ՀՀ պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները:

2. Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում նաև՝

1) արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

ա. ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ

ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից,

բ. սույն կետի «ա» ենթակետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից,

գ. ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը:

մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները, ինչպես նաև նախորդ հարկային տարիների հարկային վնասը մարելու նպատակով մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալի այլ տարրերում կատարված ներդրումները՝ նախորդ հարկային տարիների հարկային վնասը չգերազանցող չափով.

շահութահարկ վճարողի լուծարման մասին որոշման առկայության դեպքում մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից շահութահարկ վճարողի սեփական կապիտալում կատարված ներդրումները.

շահութահարկ վճարողի բաժնետոմսերի,

տեղական ինքնակառավարման մարմինների և/կամ պետական ձեռնարկությունների կապիտալից ակտիվների դուրսգրումը, որոնցում պետությունը և/կամ տեղական ինքնակառավարման մարմինը ունի 50% և ավելին մասնակցություն (բաժնեմաս):

պետությանը և/կամ տեղական ինքնակառավարման մարմիններին անհատույց տրամադրած ապրանքները և/կամ անհատույց մատուցված ծառայությունները:

բաժնեմասերի կամ փայաբաժինների տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը.

շահութահարկ վճարողի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը, եթե այդ բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայաբաժինները հետ են գնվել օրենքի պահանջով.

այլ կազմակերպության լուծարման դեպքում շահութահարկ վճարողի՝ այդ կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների դիմաց ստացվող մնացորդային գույքի արժեքի և բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների հաշվեկշռային արժեքի դրական տարբերությունը.

համատեղ գործունեության մասնակցից, որպես համատեղ գործունեության մեջ կատարվող ներդրում, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի ստացված ապրանքները, ընդունված աշխատանքները և (կամ) ստացված ծառայությունները, եթե սույն կետում նշված գործարքները կատարվում են հաշվետու մասնակցի կողմից Օրենսգրքով սահմանված հայտարարության ներկայացումից հետո.

ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը.

պարտավորությունների, այդ թվում՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված պարտավորությունների վերագնահատման բացասական արդյունքը.

հարկային արտոնությունների և վճարների գծով տրվող արտոնությունների գումարները.

հարկային պարտավորությունների կատարմանն

իրավաբանական անձանց կողմից ապրանքների տրամադրումը այլ անձանց հանրային իրավունքի ներդրման ծրագրերի շրջանակներում (ներառյալ նախապատրաստական փուլը), որոնք նախատեսված են միջազգային համաձայնագրերով և վավերացված են Վրաստանի Ազգային Ժողովի կողմից և որի պայմանավորվող կողմ ու ծրագրի ներդրման իրավասու է հանդիսանում Վրաստանի Ֆինանսների նախարարությունը:

ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները.

ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները), աշխատանքները և ծառայությունները.

հարկ վճարողի լուծարման դեպքում մինչև հազար դրամ հարկային պարտավորության գումարը.

ներդրումային ֆոնդերում մասնակցությունը հավաստող արժեթղթերից ստացվող եկամուտները (այդ թվում՝ դրանց օտարումից, փոխանակումից, այլ նմանատիպ գործարքներից, շահաբաժինների բաշխումից կամ նման այլ ձևով կատարված բաշխումներից, ինչպես նաև պայմանագրային ներդրումային ֆոնդի ակտիվների հաշվին կատարված գործարքներից).

խաղատների, շահումով խաղերի և (կամ) ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտները.

վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ

օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի շրջանակներում անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից կատարվող կուտակային վճարները:

միասնական հաշվին առկա գումարների

<p>վերադարձն օրենսգրքով սահմանված ժամկետից 30 օրվանից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր ուշացված օրվա համար հարկ վճարողի օգտին հաշվեգրվող տույժերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով շահութահարկ վճարողին (հարկային գործակալին) վերադարձվող (փոխհատուցվող)՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող աշխատավարձից և դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարները.</p>	
--	--

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Եկամտային հարկ վճարողները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:	Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Եկամտային հարկով հարկման օբյեկտը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
Համախառն եկամուտի և օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը:	Համախառն եկամուտի և օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը:

Եկամտային հարկի դրույքաչափերը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1) Աշխատավարձից՝ 23, 28, 36 տոկոս, 2) Վարձակալությունից եկամուտներ՝ 10 տոկոս: 3) Ռոյալթի, տոկոս՝ 10 տոկոս:</p> <p>ՀՀ-ում գործում են նաև եկամտային հարկի այլ դրույքաչափեր՝</p> <p>1) ՀՀ տարածքից դուրս շինարարության աշխատանքների կատարման դեպքում՝ 13 տոկոս, 2) Հավաստագրված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի աշխատողների համար՝ 10 տոկոս, 3) Վարձակալական վճարների մասով 58.35 դրամը գերազնցելու դեպքում լրացուցիչ՝ 10</p>	<p>1) Աշխատավարձից՝ 20 տոկոս, 2) Ռոյալթի՝ 20 տոկոս, ոչ ռեզիդենտի համար՝ 5 տոկոս 3) Շահաբաժինների և տոկոսների մասով՝ 5 տոկոս:</p> <p>Վրաստանի Հանրապետությունում գործում են նաև եկամտային հարկի այլ դրույքաչափեր՝</p> <p>1) Բնակվելու նպատակով բնակելի տարածքների տրամադրման դեպքում՝ առանց նվազեցման՝ 5 տոկոս: 2) Ֆիզիկական անձանց կողմից բնակարանների (անհատական բնակելի</p>

տոկոս,

4) Շահաբաժինների մասով՝ ՀՀ քաղաքացիների համար՝ **5 տոկոս**, օտարերկրյա քաղաքացիների համար՝ **10 տոկոս,**

5) Գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտների մասով՝ **10 տոկոս,**

6) Ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարման դեպքում՝ **20 տոկոս,**

7) Կառուցապատողի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների օտարման դեպքում՝ **20 տոկոս:**

տների), նրանց հետ տրված հողամասերի, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տրամադրման դիմաց ստացվող հավելյալ եկամուտը՝ **5 տոկոս:**

Վրաստանի ֆինանսների նախարարը իրավասու է սահմանել, այն ապրանքների ցանկը, որոնց մատակարարման դեպքում աղբյուրի մոտ ձեռք բերողի կողմից հարկը գանձվում է 15 տոկոս դրույքաչափով:

Հիմնական տարբերությունն այն է, որ Վրաստանում եկամտային հարկի հիմնական դրույքաչափը 5 տոկոսով ցածր է:

Վրաստանում օտարերկրյա քաղաքացիների և Վրաստանի քաղաքացիների համար շահաբաժինների դրույքաչափերը նույնն են՝ 5 տոկոս:

Նվազեցվող եկամուտները (նվազեցումներ)

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>Եկամտային հարկով չեն հարկվում՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Պետական նպաստները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության նպաստների, 2) Պետական կենսաթոշակները և պարտադիր կուտակային կենսաթոշակներ, 3) Կամավոր կենսաթոշակային վճարները՝ ֆիզիկական անձի հարկման բազայի 5 տոկոսը չգերազանցող չափով, 4) Կուտակային կենսաթոշակների բաղադրիչի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցները, ստացվող տոկոսները, 5) կրթաթոշակները 6) ապահովագրական հատուցումները, 7) Զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց համար կատարվող աշխատանքները, նրանց մատուցվող ծառայությունները կամ նրանց՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացվող եկամուտները, 8) զոհված զինծառայողների ընտանիքների անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների՝ ՀՀ օրենսդրության 	<p>Եկամտային հարկով չեն հարկվում՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Պետական նպաստները, 2) Պետական կենսաթոշակները (այդ թվում՝ պետական ակադեմիական կրթաթոշակները), <p>Ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում տուժած ներքին գործերի նախարարության աշխատակիցներին, զինված ուժերի ծառայողների կամ պետական անվտանգության ծառայության զինծառայողներին վճարված նպաստները, ինչպես նաև Խաղաղապահ առաքելությունների ընթացքում առողջությանը ծանր վնաս ստացած անձանց եկամուտները՝ օրացուցային տարվա ընթացքում մինչև 6000 լարի (1.140.000 ՀՀ դրամ) :</p> <ol style="list-style-type: none"> 3) Ալիմենտները 4) արյան հանձնելու դիմաց ստացվող փոխհատուցման վճարները

համաձայն ստացվող միանվագ վճարները,

9) Ստացվող պատվովճարները, դրամական օգնություններն ու օժանդակությունները,

10) Ալիմենտները (ապրուստավճարները),

11) արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար ստացվող եկամուտները,

12) Նորմաների սահմաններում աշխատանքային պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման հետ կապված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների փոխհատուցման վճարները), բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները,

13) պատճառված վնասի փոխհատուցուման գումարները, բացառությամբ բաց թողնված եկամտի փոխհատուցման գումարների,

14) Ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները:

15) Ոչ առևտրային կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները,

16) ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, որոշումների հիման վրա, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային, միջպետական (միջկառավարական) կազմակերպություններից անհատույց ստացվող ակտիվները, աշխատանքները, ծառայությունները, սույն կետում նշված մարմինների ու կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց համար (օգտին) կատարվող վճարումները,

17) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները,

Գյուղատնտեսական արտադրանք արտադրող

5) պետական փոխհատուցում,

6) Հարկային տարվա ընթացքում նվիրատվության կարգով ստացված կամ ժառանգություն դարձած գույքի արժեքը ամբողջությամբ՝ I և II հերթի ժառանգների դեպքում, III և IV հերթի ժառանգների դեպքում չի հարկվում մինչև 150,000 լարի (28.5 մլն. ՀՀ դրամ) շեմը, իսկ ժառանգ չհանդիսացող այլ անձանց դեպքում՝ մինչև 1000 լարի (190.000 ՀՀ դրամ) շեմը, բացառությամբ գործատուների կողմից վարձու աշխատողներին տրված նվիրատվությանը դեպքերի:

7) Բարեգործական գործունեության շրջանակներում պետության կողմից ստեղծված ոչ առևտրային (շահույթ չհետապնդող) կազմակերպություններից ստացվող եկամուտը,

8) Բուժման և (կամ) բժշկական ծառայությունների ծախսերը ֆինանսավորելու նպատակով բարեգործական կազմակերպություններից ստացվող եկամուտը,

9) Սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակարանի (անհատական բնակելի տան) օտարումից գույքի հավելաճը, եթե բնակարանը (անհատական բնակելի տունը) սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանել է 2 տարի և ավելի, տրանսպորտային միջոցը՝ 6 ամսիս և ավելի, այլ գույքը (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի)՝ 2 տարի և ավելի ժամկետով:

10) Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը, Վրաստանում գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի առաջնային մատակարարումից ստացվող եկամուտները, եթե այդպիսի մատակարարումներից մեկ օրացուցային տարվա ընթացքում համախառն եկամուտը չի

Ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտները.

18) ՀՀ ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները,

19) Վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի, ինչպես նաև տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները,

20) պետական պարգևները (մրցանակները), ինչպես նաև մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 հազար դրամը չգերազանցող չափով,

21) արժեթղթերից ստացվող եկամուտները:

22) վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի՝ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձից ստացվող հատուցման գումարները, ինչպես նաև հավասար փոխհոսքերի դեպքում ինքնավար էներգաարտադրողի կողմից էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց էլեկտրական էներգիայի տեսքով ստացվող փոխհատուցումները.

23) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի

գերազանցում 200,000 լարին (38.0 մլն. ՀՀ դրամ),

Ընդ որում, մինչև 2023 թվականի հունվարի 1-ը՝ նշված գյուղատնտեսության ոլորտում վարձու աշխատող համարվող անձանց վճարած աշխատավարձը, եթե գործատուից ստացված ընդհանուր եկամուտը չի գերազանցում 200 000 լարի (38.0 մլն. ՀՀ դրամ),

11) Վրաստանի ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթներում հաղթած մարզիկների և մարզիչների մրցանակները

12) վիճակախաղերից ստացվող շահումները, որի չափը չի գերազանցում 1000 լարին (190.000 ՀՀ դրամ),

13) Դրամական և այլ մրցանակներ,

14) արժեթղթերից ստացվող եկամուտները՝

15) Չի հարկվում էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց միկրոէլեկտրակայանի սեփականատիրոջ ստացած եկամուտը,

16) Ապապետականացման արդյունքում ստացված եկամուտները, ինչպես նաև դժբախտ պատահարների արդյունքում տուժածներին, փախստականներին տրամադրվող (այդ թվում՝ անհատույց) օգնությունը,

17) Մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտների համար գույքը լիզինգով տրամադրելու դիմաց ստացված եկամուտները չեն հարկվում:

18) ԱԱՀ վճարող չհանդիսացող ընկերակցությունների կողմից իր մասնակիցներին՝ ֆիզիկական անձանց (որոնց կազմը չի փոփոխվել ընկերակցության հիմնադրման պահից մինչև գույքի օտարումը) գույքի օտարումից ստացված եկամուտները,

Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները:

24) Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամից հատուցվող գումարները, բացառությամբ ավանդի գումարին հաշվեգրվող և հատուցվող տոկոսների,

25) ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցվող գումարները,

26) պետության կամ համայնքների կարիքների համար ֆիզիկական անձանց գույքը վերցնելու դիմաց վճարվող գումարները,

27) առողջության ապահովագրության համար կատարվող ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև 10 հազար դրամի չափով,

28) Ստացվող վարկերի և փոխառությունների գումարները,

29) Մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելու գործունեությունից ստացվող եկամուտները,

30) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողների կողմից հավաստագրի գործողության ժամկետում (5 տարի) տեղեկատվական տեխնոլոգիաների իրացումից ստացվող եկամուտները.

19) ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց աշխատավարձի ձևով ստացված եկամուտները, եթե վարձու աշխատանքը իրականացվում է Վրաստանի Հանրապետության տարածքում 1 հարկային տարվա ընթացքում 30 օրացուցային օրը չգերազանցող ժամկետով և գործատուն նույնպես ոչ ռեզիդենտ է, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ծախսերը վերագրվում են մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտի ծախսերին,

20) Կազմակերպության լուծարման կամ կապիտալի կրճատման արդյունքում Ֆիզիկական անձին (գործընկերոջը) գույքի օտարումից հավելածը, եթե այդ ներդրմանը համապատասխանող բաժնեմասը ֆիզիկական անձին պատկանել է 2 և ավելի տարի,

21) այն անձանց եկամուտները, որոնք հանդիսանում են խաղային ակումբի, խաղային սարքավորումների սրահի, ինչպես նաև տոտալիզատորների կազմակերպիչներ, բացառությամբ համակարգված ցանցային կապուղիների միջոցով իրականացվող խաղերից ստացվող եկամուտների,

22) հյուրանոցային համարի սեփականատիրոջ եկամուտը՝ պայմանագրային հիմունքներով հյուրանոցի գործունեությունն ապահովելու նպատակով հրավիրված անձին հյուրանոցային համար անհատուց տրամադրելու հետ կապված՝ օրացուցային տարվա ընթացքում ոչ ավելի քան 60 օր,

23) Սնանկության գործընթացում գտնվող անձի, ինչպես նաև այդ անձի մոտ որպես վարձու աշխատող անձանց ստացած եկամուտները,

24) բարձր լեռնային բնակավայրերում ձեռնարկության կարգավիճակ ունեցող անձանց կողմից իրականացնող գործունեությունից եկամուտները՝ կարգավիճակի ձեռքբերման ժամանակահատվածից 10

օրացուցային տարվա կտրվածքով,

2. Եկամտային հարկով չեն հարկվում՝
ա) մինչև 3000 լարի (570.000 ՀՀ դրամ)

եկամուտ ունեցող հետևյալ անձինք՝

✓ Երկրորդ համաշխարհային պատերազմի

և այլ ռազմական գործողությունների

մասնակից Վրաստանի քաղաքացիները,

✓ «Մայր Վրաստան» պատվավոր կոչում

ստացած անձինք,

✓ Միայնակ մայրերը,

✓ Որդեգրող անձինք (որդեգրման օրվանից

մեկ տարվա ընթացքում)

✓ Անձինք, ովքեր զբաղվում են երեխայի

դաստիարակությամբ (խնամակալությամբ),

Պետական բյուջեից հատկացվող

աշխատավարձերի մասով՝

1. Բարձրագույն վայրերում բնակվող
բազմազավակ անձանց (մինչև 18 տարեկան
3 և ավելի երեխաներ ունեցողներ) եկամուտ-
ները՝ մինչև 3000 (570.000 ՀՀ դրամ) լարի
շեմը:

2. Բարձրագույն վայրերում բնակվող
բազմազավակ անձանց (մինչև 18 տարեկան
1 կամ 2 երեխա ունեցող) եկամուտները, է՝
մինչև 3000 լարի շեմը (570.000 ՀՀ դրամ)
եկամտային հարկը նվազեցվում է 50% -ի
չափով

✓ հաշմանդամություն ունեցող անձանց

կողմից ստացված մինչև 6000 լարի

(1.140.000 ՀՀ դրամ) եկամուտը:

✓ Բարձրագույն վայրերում, մշտական

բնակության կարգավիճակ ունեցող անձանց

մինչև 6000 լարի (1.140.000 ՀՀ դրամ)

հարկվող եկամուտը, (բացառությամբ

պետական կամ համայնքային բյուջեից

հատկացվող աշխատավարձերի):

Էական տարբերությունները հետևյալն են՝

ա) ՀՀ ժամանակավոր անաշխատունակության նպաստները հարկվում են, իսկ Վրաստանում՝ ոչ:

բ) ՀՀ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացած գույքը և (կամ) դրամական միջոցները չեն հարկվում, իսկ Վրաստանում չեն հարկվում միայն I և II հերթի ժառանգների և գործատուների կողմից վարձու աշխատողներին տրված նվիրատվության դեպքերում, իսկ III և IV հերթի ժառանգների դեպքում չի հարկվում մինչև 150,000 լարի (28.5 մլն. ՀՀ դրամ) շեմը, իսկ ժառանգ չհանդիսացող այլ անձանց դեպքում՝ մինչև 1000 լարի (190.000 ՀՀ դրամ) շեմը:

գ) Սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի (բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի) օտարումից ֆիզիկական անձանցից ստացվող եկամուտները առումով ՀՀ-ում չկան ժամկետային սահմանափակումներ, իսկ Վրաստանում այդ եկամուտները չեն հարկվում, եթե՝

- եթե բնակարանը սեփականության իրավունքով ֆիզիկական անձին պատկանել է 2 տարի և ավելի,
- տրանսպորտային միջոցը՝ 6 ամսիս և ավելի,
- այլ գույքը՝ 2 տարի և ավելի ժամկետով:

դ) Գյուղատնտեսական արտադրանք արտադրող ֆիզիկական անձանց՝ գյուղատնտեսական արտադրանքի մատակարարումից ստացվող եկամուտների մասով ՀՀ-ում չհարկվող շեմ սահմանված չէ, մինչդեռ Վրաստանում այդ եկամուտները չեն հարկվում մինչև 200,000 լարին (38.0 մլն. ՀՀ դրամ) շեմը, սակայն մինչև այդ շեմը չեն հարկվում նաև վարձու աշխատողների ստացած եկամուտները (աշխատավարձերը):

ե) ՀՀ-ում վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները մինչև 50 հազար դրամի շեմը չեն հարկվում, իսկ Վրաստանում մինչև 190 000 դրամի շեմը:

զ) ՀՀ-ում խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի, ինչպես նաև տոտալիզատորի մասնակիցների դրամական և իրային շահումները չեն, իսկ Վրաստանում հարկվում են:

է) ՀՀ-ում մրցույթներում ստացվող դրամական և իրային մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում մինչև 50 հազար դրամի շեմը չեն հարկվում, իսկ Վրաստանում շեմ սահմանված չէ:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

ԱԱՀ վճարողները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ԱԱՀ վճարողներ են համարվում՝</p> <p>1. Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝</p> <ul style="list-style-type: none"> • եթե հարկ վճարողը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ 	<p>ԱԱՀ վճարողներ են համարվում՝</p> <p>1. Անձինք, ովքեր հաշվառված են կամ պարտավոր են հաշվառվել որպես ԱԱՀ վճարողներ,</p> <p>2. Անձինք, ովքեր իրականացնում են ներմուծում և ժամանակավոր ներմուծում</p>

սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու և ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն

- Եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

- Եթե հարկ վճարողը տվյալ հարկային տարում դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող:

2. Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունները և բացառապես գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը, եթե՝

- Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 58.35 միլիոն դրամը կամ եթե հարկային տարվա ընթացքում է գերազանցում 58.35 միլիոն դրամը:

- Կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

Կամավորության սկզբունքով հաշվառումը

Կամավորության սկզբունքով հայտարարություն ներկայացնելու դեպքում հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարողներ հաշվառվում են՝

ա. ՀՀ-ն՝ ի դեմս պետական կառավարչական հիմնարկների,

բ. ՀՀ համայնքները՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների,

գ. ՀՀ կենտրոնական բանկը:

Որպես ԱԱՀ վճարող չհաշվառված, սակայն ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու

Վրաստան: Ընդ որում, նրանք ԱԱՀ վճարող են համարվում միայն ներմուծված ապրանքների գծով և պարտավոր չեն հարկային մարմնում հաշվառվել որպես ԱԱՀ վճարող:

3. Ոչ ռեզիդենտները (բացի Վրաստանի քաղաքացիներից), ովքեր մատուցում են ծառայություններ Վրաստանի տարածքում առանց հաշվառվելու որպես ԱԱՀ վճարողներ, ինչպես նաև ոչ ռեզիդենտների մշտական հաստատությունները, ովքեր հաշվառված են Վրաստանի հարկային մարմնում: Նրանք ԱԱՀ վճարող են համարվում միայն մատուցած ծառայության մասով և ենթակա են հետադարձ հարկման,

4. Անձինք, ովքեր պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց պայմանագրի ապահովման առարկան փոխանցում են կրեդիտորին՝ որպես սեփականություն: Նրանք ԱԱՀ վճարող են համարվում միայն այդ գործարքի համար և ենթակա են հետադարձ հարկման: Նրանք պարտավոր չեն հարկային մարմնում հաշվառվել որպես ԱԱՀ վճարող:

5. Անձինք, որոնց ապրանքները մատակարարվում են հարկային պարտավորությունների կամ այլ դրամային պարտավորությունների (բացառությամբ սանկցիաների) չկատարման դիմաց միջոցառումների, ինչպես նաև աճուրդների, ուղղակի վաճառքի շրջանակներում: Նրանք ԱԱՀ վճարող են համարվում միայն այդ գործարքների համար և պարտավոր չեն հարկային մարմնում հաշվառվել որպես ԱԱՀ վճարող:

6. Անձինք, որոնց գույքը իրացվում է՝ «Անվճարունակության վարույթի մասին» Վրաստանի օրենքի դրույթներին համապատասխան: Նրանք ԱԱՀ վճարող են համարվում միայն այդ գործարքների համար և պարտավոր չեն հարկային մարմնում հաշվառվել որպես ԱԱՀ վճարող:

Կամավոր հաշվառումը

Անձը կարող է կամավոր դիմել որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար: Նա ԱԱՀ

դեպքերը՝

1) Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող չհաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ իրականացնելու, ինչպես նաև ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից ապրանքի մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման դեպքում պարտավոր են հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործարքներից և (կամ) գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

2) Անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն եթե նրանք ՀՀ տարածք են ներմուծում ապրանքներ, որոնց ներմուծումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում, կամ եթե մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք իրականացնում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ, ապա պարտավոր են պետական բյուջե վճարել այդ գործարքներից և (կամ) գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

ԱԱՀ-ով հարկվող գործարք իրականացնելու, սակայն ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չկրելու դեպքերը՝

Ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը մինչև գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամը գերազանցելը հարկման օբյեկտ համարվող գործարքներ իրականացնելու դեպքում (բացառությամբ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման

վճարող է համարվում հարկային մարմին դիմելու օրվանից, բայց ոչ ուշ այն ժամկետից, որը սահմանված է պարտադիր հաշվառման համար:

Որպես ԱԱՀ վճարող հաշվառվում են՝

1. Անձինք, որոնց կողմից իրականացված ԱԱՀ-ով հարկվող գործարքների ընդհանուր շրջանառությունը **ցանկացած** 12 ամսյա չընդհատվող ժամանակահատվածում գերազանցում է 100 000 լարին՝

2. Այն անձինք, ովքեր արտադրում են կամ ներմուծում են ենթաակցիզային ապրանքներ Վրաստան (բացառությամբ այն դեպքերի, երբ ենթակցիզային ապրանքների ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից), պարտավոր են դիմել հարկային մարմին որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար մինչև ենթաակցիզային ապրանքների մատակարարումը:

3. Վերակազմակերպման արդյունքում ձևավորված կազմակերպությունները այն դեպքում, երբ վերակազմակերպման կողմերից մեկը հանդիսանում է ԱԱՀ վճարող, պարտավոր են դիմել հարկային մարմին որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար

ԱԱՀ-ով հարկվող գործարք իրականացնելու, սակայն ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չկրելու դեպքերը՝

Այն անձինք, ովքեր իրականացնում են ապրանքի մատակարարում միայն հատուկ տնտեսական գոտիներում, ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի առաջանում:

գործարքների), ինչպես նաև ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից ապրանքի մատակարարման, ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման դեպքում այդ գործարքներից ԱԱՀ հաշվարկելու և պետական բյուջե վճարելու պարտավորություն չեն կրում:

Որպես ընդհանուր տարբերություն, թերևս տեղին է անդրադառնալ այն հանգամանքին, որ հարկ վճարողը ՀՀ-ում ԱԱՀ վճարող է համարվում, երբ նախորդ տարվա կամ ընթացիկ տարվա իրացման շրջանառությունը գերազանցում է ԱԱՀ շեմը, իսկ Վրաստանում՝ **ցանկացած** 12 ամսյա չընդհատվող ժամանակահատվածում ԱԱՀ-ի շեմը գերազանցելու դեպքում:

Վրաստանում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար ԱԱՀ վճարող համարվելու առանձնահատկություններ սահմանված չեն:

Ե՛վ ՀՀ-ում, և՛ Վրաստանում գործում է կամավորության սկզբունքով որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու դրույթ:

Երկու երկրում էլ ակցիզային հարկ վճարողները ԱԱՀ վճարողներ են համարվում:

Վրաստանում առանձին նախատեսվում են հարկային, վարկային կամ պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց ապահովման առարկայի կամ գույքի փոխանցման գործարքների մասով ԱԱՀ վճարելու պարտավորություն կրելու դեպքեր:

ԱԱՀ-ի շեմը և իրացման շրջանառության հաշվարկման առանձնահատկությունները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ԱԱՀ-ի շեմը 2018 թվականի համար կազմում է՝ 115 մլն ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի և դրանից հետո՝ 58.35 մլն ՀՀ դրամ:</p>	<p>ԱԱՀ-ի շեմը կազմում է 100 հազար լարի, որը համարժեք է 19 մլն ՀՀ դրամին (1 լարին հավասար է 190 ՀՀ դրամ):</p>
<p>Իրացման շրջանառությունը ներառում է նաև արտոնագրային հարկի և ընտանեկան ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը:</p>	<p>Իրացման շրջանառության հաշվարկում հաշվի չի առնվում ԱԱՀ-ից ազատված գործարքների իրացման շրջանառությունը:</p>

ԱԱՀ-ի շեմը Վրաստանում ավելի ցածր է, 2019 թվականի համեմատ մոտ 3, իսկ 2018 թվականի համեմատ մոտ 6 անգամ:

Իրացման շրջանառության հաշվարկման մեխանիզմները տարբերվում են:

ԱԱՀ-ով հարկման օբյեկտը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում՝</p> <p>ա) ապրանքի մատակարարումը, եթե ապրանքի մատակարարման վայրը համարվում է ՀՀ-ն</p> <p>բ) աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը:</p> <p>գ) «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ ապրանքի ներմուծումը.</p> <p>դ) ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը:</p> <p>Ծառայության մատուցում է համարվում նաև՝</p> <p>ա. ապրանքի՝ վարձակալության կամ օգտագործման տրամադրումը (բացառությամբ ապրանքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) այն դեպքերի, երբ վարձակալության պայմանագրով նախատեսվում է ապրանքի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին),</p> <p>բ. փոխառության տրամադրումը,</p> <p>գ. ոչ նյութական ակտիվի օտարումը.</p>	<p>ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում՝</p> <p>ա) ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը</p> <p>բ) ապրանքների ներմուծումը</p> <p>գ) արտահանումը, վերաարտահանումը</p> <p>դ) ժամանակավոր ներմուծումը</p> <p>ԱԱՀ-ով հարկվող գործարք է համարվում նաև՝</p> <ul style="list-style-type: none"> • սեփական արտադրության շենքերի և շինությունների օգտագործումը՝ որպես հիմնական միջոց, • բաժնեմասի դիմաց շահաբաժնի վճարման փոխարեն կազմակերպության կողմից ապրանքների և ծառայությունների տրամադրումը անձին՝ որպես սեփականություն, • վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ մինչև պայմանագրի ժամկետի լրանալը վարձակալի կողմից վարձատուին հիմնական միջոցների վերադարձը:

Վրաստանում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է համարվում նաև ժամանակավոր ներմուծումը, արտահանումը և վերաարտահանումը, Սակայն անհրաժեշտ է նշել, որ արտահանումը և վերաարտահանումը ազատված են ԱԱՀ-ից:

ԱԱՀ-ով հարկման բազան

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում դրանց արժեքը՝ դրամական արտահայտությամբ՝ առանց ԱԱՀ-ի:</p> <p>2. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով որոշվող մաքսային</p>	<p>1 Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան դրանց դիմաց ստացված կամ ստացման ենթակա փոխհատուցման գումարն է՝ առանց ԱԱՀ-ի,</p> <p>2 Ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի և ներմուծման վճարների հանրագումարն է: Խառը գործարքների դեպքում (այն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների համակցված մատակարարումը) հարկման բազան ներառում է նաև ապրանքների</p>

արժեքի, մաքսատուրքի, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ նաև ակցիզային հարկի հանրագումարը:

3. ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքի ներմուծման դեպքում՝ ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքի և ակցիզային հարկի հանրագումարը:

4. ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված, ինչպես նաև ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի մատակարարման գործարքի դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ապրանքների մաքսային արժեքը:

ներմուծման մաս հանդիսացող ծառայությունների արժեքը՝ առանց ԱԱՀ:
3 Ապրանքների արտահանման դեպքում մաքսային արժեքն է:

ԱԱՀ-ով հարկման բազան ՀՀ-ում և Վրաստանում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների, ինչպես նաև արտահանման դեպքում նույնն է:

Ներմուծման դեպքում Վրաստանում ԱԱՀ-ով հարկման բազան ապրանքի մաքսային արժեքի ու ներմուծման վճարի (որը համարժեք է ՀՀ-ի մաքսատուրքին) հանրագումարն է, իսկ ՀՀ-ում մաքսային արժեքի ու մաքսատուրքի հանրագումարն է, ԵՏՄ անդամ պետություններից ներմուծման դեպքում՝ ապրանքների ձեռք բերման արժեքը:

ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1. Ապրանքի մատակարարման գործարքի՝ ԱԱՀ-ով հարկման բազան որոշելիս</p> <p>2. հարկման բազային գումարվում են նաև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դեպքում՝ սահմանված կարգով հաշվարկված ակցիզային հարկի գումարը, իսկ բնապահպանական հարկով հարկման ենթակա ապրանքի դեպքում՝ բնապահպանական հարկի գումարները:</p> <p>3. Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ:</p>	<p>1 Ոչ տնտեսական գործունեություն նպատակով ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար ԱԱՀ-ով հարկման բազան այդ ապրանքների և ծառայությունների շուկայական գինն է:</p> <p>2 Սեփական արտադրության շենքերի, շինությունների՝ որպես հիմնական միջոց օգտագործման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազան ակտիվի արժեքն է:</p> <p>3 Հիմնական միջոցների վարձակալության ժամկետի ավարտին կամ դրա վաղաժամկետ դադարի դեպքում՝ վերանորոգման ծախսերի</p>

4. Ծխախոտի արտադրանքի ներմուծման և (կամ) մատակարարման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ծխախոտի արտադրանքի տուփի վրա ՀՀ կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի:

5. Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսը:

6. ՀՀ կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ, իսկ իրական արժեքից ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ստացման ենթակա հատուցման գումարը՝ առանց ԱԱՀ-ի:

7. Շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար Օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող՝ անշարժ գույքի հարկով հարկման բազայի չափով, բացառությամբ սույն մասով սահմանված դեպքի: Սույն պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե սույն պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):

8. Հրոսաշրջության գործունեության մասով ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է Օրենսգրքի 61-րդ հոդվածով և սույն հոդվածով

ընդհանուր արժեքն է:

4 Միջազգային հեռահաղորդակցության ծառայությունների տրամադրման դեպքում հարկման բազայի որոշման դեպքում չի հաշվարկվում այն գումարը, որը ստացվել է կամ ենթակա է ստացման ոչ ռեզիդենտներին նույն ծառայությունների մատուցման դիմաց:

5 Վերադարձման ենթակա բազմակի օգտագործման շրջանառելի տարայի արժեքը չի ներառվում հարկման բազայի հաշվարկում, բացառությամբ մանրածախ առևտրի: Մանրածախ առևտրի դեպքում հարկման բազան կրճատվում է այն գումարի չափով, որը վճարում է վաճառողը գնորդին տարայի վերադարձման ժամանակ: Եթե նշված տարան չվերադարձվի 90 օրացուցային օրվա ընթացքում՝ հաշվարկված ապրանքի մատակարարման պահից, ապա այն կհամարվի իրացված և կհարկվի ընդհանուր սահմանված կարգով:

6 Ապրանքների/ծառայությունների բարտերային փոխանակման դեպքերում հարկման բազան փոխանակվող ապրանքների/ծառայությունների շուկայական գինն է:

ԱԱՀ-ով հարկման բազան կարող է հաշվարկվել շուկայական գների հիման վրա նաև հետևյալ դեպքերում՝

- 1) փոխկապակցված անձանց միջև գործարքների դեպքում,
- 2) աշխատակցին ապրանք մատակարարելու կամ ծառայություն մատուցելու դեպքում,
- 3) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքների դեպքում,
- 4) տուրիստական գոտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտին ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում,
- 5) երբ հարկային մարմինը հաստատում է, որ ներկայացված (հայտարարված) գինը տարբերվում է փաստացի գնից:

սահմանված կարգով՝ առանց միջազգային ուղևորափոխադրման համար զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից վճարվող գումարի:

Վրաստանում սահմանված է նաև ԱԱՀ-ով հարկման բազան բարտերային փոխանակման գործարքների դեպքում:

Առանձին դեպքերում Վրաստանում ԱԱՀ-ով հարկման բազան ապրանքների և ծառայությունների շուկայական գինն է, որն իր մեջ ներառում է նաև ԱԱՀ:

Եթե ՀՀ-ում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ, ապա Վրաստանում չի ներառվում, բացառությամբ մանրածախ առևտրի: Մանրածախ առևտրում հարկման բազան կրճատվում է այն գումարի չափով, որը վճարում է վաճառողը գնորդին տարայի վերադարձման ժամանակ:

Անհատույց գործարքների համար Վրաստանում ԱԱՀ-ով հարկման բազան որոշվում է շուկայական գների հիման վրա, իսկ ՀՀ-ում հիմք է ընդունվում գործարքի իրական արժեքի 80 տոկոսը, իսկ ՀՀ կառավարության որոշումների հիման իրականացվող գործարքների դեպքում՝ 0 դրամ:

ԱԱՀ-ի դրույքաչափը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1. 20 տոկոս՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ,</p> <p>2. 0 տոկոս՝ օրենսգրքով սահմանված գործարքների հարկման բազայի նկատմամբ:</p> <p>Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ:</p>	<p>1) 18 տոկոս՝ ապրանքների և ծառայությունների հարկման բազայի նկատմամբ</p> <p>2) ժամանակավոր ներմուծման դեպքում՝ 0.54 տոկոս՝ ներմուծված ապրանքների արժեքի նկատմամբ յուրաքանչյուր լրիվ և ոչ լրիվ ամիսների համար, որի ընթացքում ապրանքը գտնվում է Վրաստանի տարածքում</p> <p>3) հետադարձ հարկման դեպքում՝ 18 տոկոս</p>

ԱԱՀ-ի դրույքաչափը ՀՀ-ում սահմանված է 20 տոկոս, իսկ Վրաստանում 18 տոկոս:

Վրաստանում սահմանված է նաև 0.54 տոկոս դրույքաչափ ժամանակավոր ներմուծման դեպքում:

Վրաստանում 0 տոկոս դրույքաչափ սահմանված չէ, սակայն այն գործարքները որոնք պետք է հարկվեն 0 տոկոսով հաշվանցման իրավունքով ազատվում են ԱԱՀ-ից:

ԱԱՀ-ի արտոնությունները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ գործարքներն ու գործառնությունները՝</p> <p>1) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը:</p> <p>2) դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ ԳԱԱ հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: ՀՀ կառավարության սահմանած չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքների կատարումը.</p> <p>3) հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում աշխատանքների կատարումը:</p> <p>4) հանրակրթության ոլորտում իրականացվող կրթական բնույթի առարկայական մրցույթներին, մրցաշարերին, օլիմպիադաներին մասնակցության իրավունքի տրամադրումը.</p> <p>5) նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատներում, մանկատներում, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատություններում, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունների մատուցումը, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ</p>	<p>Առանց հաշվանցման իրավունքի ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ ապրանքների մատակարարումը, ներմուծումը և ժամանակավոր ներմուծումը՝</p> <ul style="list-style-type: none"> • ազգային արժույթի, արտարժույթի և արժեթղթերի մատակարարումը կամ ներմուծումը • Վրաստանի Ազգային բանկին փոխանցման ենթակա ոսկու և ոսկու ծուլակտորների ներմուծումը • պետության սեփականությանը հանձնված ոսկերչական իրերի, անշարժ գույքի մատակարարումը, որոնցից ստացված հասույթը հաշվեգրվում է պետական բյուջեին • սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը • պետական սեփականություն հանդիսացող շարժական գույքի ներմուծումն ու մատակարարումը, լիզինգային պայմանագրով գույքի հանձնումը «Պետական գույքի մասին» օրենքի համաձայն • Ֆիզիկական անձի կողմից՝ <ul style="list-style-type: none"> ➢ տնտեսական գործունեության համար չնախատեսված 02, 04, 06-12, 15-21 խմբերում և 0302-0307, 2201-2202 ծածկագրերում ներառված պարենային ապրանքների ներմուծումը տարեկան մեկ անգամ, որոնց գումարային արժեքը չի գերազանցում 500 լարին և քաշը չի գերազանցում 30 կգ-ն (այդ թվում փոստային առաքմամբ) ➢ տնտեսական գործունեության համար չնախատեսված 30 օրացուցային օրը մեկ 28–97 խմբերում ներառված ապրանքների ներմուծումը (բացառությամբ 3824 90 980 01 ծածկագրում ներառված ապրանքների), որոնց գումարային արժեքը չի գերազանցում 500 լարին և քաշը չի գերազանցում 30 կգ-ն (այդ թվում փոստային առաքմամբ) (ուժի մեջ է մտել 2017 թվականի օգոստոսի 1-ից) ➢ տնտեսական գործունեության համար

պատրաստված ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

6) հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը.

7) թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների օտարումը.

8) կրոնական ծիսակատարությունների կազմակերպման ծառայությունների մատուցումը, կրոնական կազմակերպություններին կրոնական պարագաների օտարումը, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների օտարումը.

9) օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական, բարեգործական, կրոնական կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների ներմուծումը, ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը:

10) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների, մասնավորապես հիվանդությունների կանխարգելման, ակտորոշման, բժշկական խորհրդատվության, բուժական,

չնախատեսված 2403 99 900 02

ծածկագրերում ներառված 200 հատ ծխախոտի կամ 50 սիգարի կամ 50 սիգարեթլայի կամ 200 հատ ծխախոտի արտադրանքի կամ 2403 99 900 01 ծածկագրում ներառված 10 հատ կապտուկների՝ օդային տրանսպորտով ներմուծումը կամ 3824 90 980 01 ծածկագրում ներառված ապրանքի 50 մլ ներմուծումը

➢ 1 լիտր 22 % և ավել սպիրտայնությամբ ալկոհոլային խմիչքների ներմուծումը կամ 80% և ավել ոչ ալկոհոլային խմիչքների ներմուծումը կամ 2 լիտր 22 %-ից պակաս սպիրտայնությամբ ալկոհոլային խմիչքների ներմուծումը կամ այդ ապրանքների համակցության ներմուծումը (բացառությամբ գինու և գարեջրի), կամ 4 լիտր գինու և 16 լիտր գարեջրի ներմուծումը, եթե դրանք փոխադրվում են պայուսակով կամ ուղեբեռով և նախատեսված չեն տնտեսական գործունեության նպատակով

➢ տնտեսական գործունեության համար չնախատեսված Վրաստան մշտական բնակության մեկնող անձանց կողմից ապրանքների ներմուծումը (այդ թվում կահույք, կենցաղային ապրանքներ, համակարգիչ, հեռուստացույց, սառնարան):

➢ տնտեսական գործունեության համար չնախատեսված 28-97 խմբում ներառված մինչև 3000 լարի արժողությամբ և մինչև 30 կգ քաշ ունեցող ապրանքների՝ օդային տրանսպորտով ներմուծումը

• Վրաստանի Մայր Եկեղեցու կողմից մոմերի, գրքերի, օրացույցների, սրբապատկերիների մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 4820 20 000 00 (տետրեր)

ծածկագրին դասվող ապրանքների մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 4801 (լրագրային թուղթ), 4802 55 (թուղթ), 4802 (գրելու, տպագրության կամ գրի հետ կապված այլ նպատակով օգտագործվող թուղթ և ստվարաթուղթ) ծածկագրերին դասվող ապրանքների

մատակարարումը/ներմուծումը

• ԱՏԳ ԱԱ 1211 90 980 00, 1211 20 000 00 (ժենշենի արմատ), 1301 20 000 00, 1301 90 000 00, 1504 20, 1515 30, 1520 00 000 00,

վերականգնողական, բժշկական փորձաքննության անցկացման ծառայությունների մատուցումը.

11) դոնորային արյան և դրա բաղադրամասերի, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և բժշկական նշանակության ապրանքների օտարումը, բժշկական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում պացիենտների պատրաստած ապրանքների օտարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը:

12) պետության կամ համայնքի կողմից կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը.

13) բռնագրավման կամ նվիրատվության ձևով ապրանքի մատակարարումը պետությանը:

14) հողամասից կանոնվին հրաժարվելու դեպքում սեփականության իրավունքով պատկանող հողամասի օտարումը համայնքին կամ պետությանը.

15) հողամասի կամ այլ անշարժ գույքի փոխանակությունը, եթե այդ գործարքի կողմ են հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը.

16) սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, եթե նշված ծրագրերն արժանացել են ՀՀ կառավարության ձևավորած մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությանը:

17) պետական կառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցումը, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի վճարում.

18) կոնցեսիոնների (օպերատորի) կողմից կոնցեդենտին (շնորհատուին) պատկանող

1702 11 000 00, 3912 12 000 00, 3912 31 000 00, 7010 10 000 00, 7010 90 790 00 , 9602 00 000 00 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը/մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 28 և 29 խմբերին դասվող դեղագործական արտադրանքի և բժշկական նշանակության ապրանքների ներմուծումը/մատակարարումը

• Պետական գնումների շրջանակներում Աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարի հրամանով սահմանված ցանկում ընդգրկված բժշկական նպատակներով ապրանքների ներմուծումը/մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 8419 20 000 00, 9001 30 000 00, 9001 40, 9001 50, 9018-9022

(բացառությամբ 9019 10 900 00), 9025 11 200 00 և 9402 90 000 00 ծածկագրերին դասվող բժշկական, անասնաբուժական ապրանքների ներմուծումը/մատակարարումը,

անվասայլակների, ԱՏԳ ԱԱ 8713 և 8714 20 000 00 ծածկագրերին դասվող բժշկական ախտորոշիչ թեստավորման համակարգերի, գլյուկոմետրերի ներմուծումը/մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 0102 21, 0103 10 000 00, 0104 10 100 00, 0104 20 100 00, 0105 11, 0511 10 000 00, 0602 10, 2503 00, 2803 00, 3101 00 000, 3103-3105, 3808 91, 3808 92 և 3808 93

ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը/մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 8703 ծածկագրին դասվող ավտոմեքենաների, ինչպես նաև 8711 ծածկագրին դասվող մոտոցիկլերի ներմուծումը/մատակարարումը,

• ԱՏԳ ԱԱ 4901, 4902, 4903 00 000 00 և 4904 00 000 00 ծածկագրերին դասվող գրքերի, ամսագրերի ներմուծումը/մատակարարումը

• անձնական սպառման համար ապրանքների ներմուծումը և ժամանակավոր ներմուծումը օտարերկրյա պետությունների քաղաքացիների կողմից, որոնք զբաղված են նավթի և գազի որոնման, արդյունահանման աշխատանքներում

• Աշխատանքի, առողջապահության և

ենթակառուցվածքային ակտիվների, դրանց առանձին տարրերի վրա կատարված բարելավման արդյունքի կամ գնված կամ կառուցված կամ փոխարինված ենթակառուցվածքային ակտիվների (նյութական կամ ոչ նյութական), դրանց կազմում առանձին տարրերի՝ կոնցեսիայի պայմանագրի գործողության ընթացքում կամ ավարտին կոնցեդենտին (շնորհատուին) օտարումը, ինչպես նաև կոնցեդենտին (շնորհատուին) կոնցեսիոն ծառայությունների մատուցումը:

19) ԱՏԳԱԱ 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմերի և տնկանյութի օտարումը.

20) անմիջական արտադրողի կողմից ՀՀ-ում արտադրված՝ ԱՏԳԱԱ 570110, 570210 ծածկագրերին դասվող ձեռագործ գորգերի օտարումը.

21) ջրօգտագործողների ընկերությունների կողմից ռոզգման ջրի օտարումը.

22) ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.

23) թերթերի և ամսագրերի օտարումը.

24) ՀՀ կառավարության սահմանած ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի օտարումը.

25) թանկարժեք մետաղների և թանկարժեք մետաղներից պատրաստված՝ ԱՏԳԱԱ 7106, 7108, 7109, 7110, 7113, 7115 ծածկագրերին

սոցիալական պաշտպանության նախարարի կողմից սահմանված մանկական սննդի ներմուծումը/մատակարարումը

- դիաբետիկ հացի

ներմուծումը/մատակարարումը

• ԱՏԳ ԱԱ 8706 00 190 00, 9706 00 990 00, 8706 00 990 00, 8707 90 100 00, 8707 90 900 00, 8708 10 900 00, 8708 29 100 00-8708 40 900 00, 8708 50 900 00-8708 70 100 00, 8708 80, 8708 91, 8708 92, 8708 93, 8708 94 և 8708 99 ծածկագրերին դասվող շասսիի,

սարքավորումների ու մասերի,

- 8432 90 000 00 and 8433 90 000 00

ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը

- բնական գազի ներմուծումը

• ԱՏԳ ԱԱ 8802 11 100 00, 8802 12 100 00, 8802 20 100 00, 8802 30 100 00 և 8802 40 100 00 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը

• ԱՏԳ ԱԱ 8903 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծումը/մատակարարումը

- հողամասի տրամադրումը

• բաժնեմասի տրամադրումը (բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը), եթե այդ բաժնեմասին ամրացված չէ գույք, բացառությամբ այն դեպքի, երբ անձին բաժնեմասի նկատմամբ տրամադրվում է գույք

• ընկերակցության անդամներին գույքի տրամադրումը, եթե բոլոր անդամները ֆիզիկական անձ են և ընկերակցության կազմը ձևավորման պահից մինչև տրամադրման պահը չի փոխվել և ընկերակցությունը տրամադրման պահին չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

• ազատ ինդուստրիալ գոտու տարածքում ապրանքների մատակարարումը.

• կառավարության հաստատած ցանկում ներառված գյուղատնտեսական թունաքիմիկատների, սերմերի ներմուծումը

• ակցիզային դրոշմավորման համար նախատեսված ապրանքների ներմուծումը այն անձի կողմից, ով ընտրվել է Եկամուտների ծառայության կողմից

- ներքին այրման շարժիչի գործողության

դասվող՝ ոսկերչական նշանակության կիսապատրաստուկների օտարումը.

26) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը.

27) Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշներին բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի՝ օտարումը..

28) խաղատների գործունեության կազմակերպումը.

29) շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի) կազմակերպումը.

30) ապրանքի մատակարարման հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում ապրանքը մատակարարողի կողմից տվյալ ապրանքի հետ կապված սպասարկման ծառայությունների անհատույց մատուցումը, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց լրակազմող տարրերի փոխարինման նպատակով ապրանքի անհատույց մատակարարումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների արժեքում:

31) կազմակերպության կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը.

32) օրենքով սահմանված կարգով իրականացվող՝ կազմակերպության վերակազմակերպման շրջանակներում ապրանքի մատակարարումը և (կամ) ծառայության

հետ տեխնոլոգիապես և կառուցվածքային առումով փոխկապված ստանդարտ բաքերով վառելիքի ներմուծումը

• ֆիզիկական անձի կողմից իր սեփականության տակ գտնվող հյուրանոցի ակտիվների տրամադրումը, եթե նոր սեփականատերը զբաղեցնում է նախկին սեփականատիրոջ տեղը պայմանագրային հիմունքներով

• 8703 10 110 00 ծածկագրերին դասվող տրանսպորտային միջոցների ներմուծումը/մատակարարումը

• ֆիզիկական անձանց բնակելի տների և դրանց ամրացված հողամասերի մատակարարումը, եթե այդ գույքը նրանցից բռնագանձվել էր պարտավորությունների չկատարման դիմաց

Առանց հաշվանցման իրավունքի ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ ծառայությունները՝

✓ ֆինանսական ծառայությունների մատուցումը և ֆինանսական գործարքները

✓ եկեղեցիների կառուցման, վերակառուցման և գունավորման ծառայությունները

✓ Մշակույթի և սպորտի նախարարի համաձայնությամբ անձի կողմից մշակութային ժառանգության հուշարձանների վերականգնման, նախագծման եւ հետազոտական աշխատանքների կատարումը

✓ թաղման ծիսակատարությունների կազմակերպումը

✓ բժշկական ծառայությունների մատուցումը

✓ կրթական (այդ թվում նախադպրոցական) հաստատությունների կողմից երեխաների

խնամքի ծառայությունների մատուցումը, ինչպես նաև հիվանդ, սահմանափակ կարողություններով անձանց, 60 և ավել տարեկան անձանց խնամքի ծառայությունները

✓ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպումը

✓ ԱԱՀ-ից ազատված ապրանքների՝

ֆինանսական լիզինգի պայմանագրով տրամադրումը

✓ ԱԱՀ-ից ազատված ապրանքների՝ ֆինանսական լիզինգի պայմանագրով տրամադրումը

մատուցումը.

33) սեփականաշնորհման կամ ապապետականացման գործարքների շրջանակներում ապրանքի մատակարարումը.

34) ՀՀ տարածք մշակութային արժեքների ներմուծումը.

35) ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգից տարբերվող մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների մատակարարումը..

36) օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կամ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ՀՀ տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են (այդ թվում՝ ԵՏՄ անդամ պետություններ).

37) ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով ԵՏՄ անդամ չհամարվող պետություն արտահանված կամ ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված սև և գունավոր մետաղների ջարդոնի մատակարարումը.

38) անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի կողմից իրենց անձնական գույքի օտարման գործարքները.

39) անհատ ձեռնարկատիրոջը կամ նոտարին պատկանող՝ ժառանգության զանգվածում ներառվող գույքի՝ ժառանգին օտարումը.

40) ՀՀ ժամանող ֆիզիկական անձանց կողմից իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

✓ ազատ ինդուստրիալ գոտու ձեռնարկությունների միջև, ինչպես նաև նրանց կողմից ոչ ռեզիդենտներին (բացառությամբ մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտների) ծառայությունների մատուցումը

✓ 4901, 4902, 4903 00 000 00 և 4904 00

000 00 ծածկագրերին դավող գրքերի, ամսագրերի հրատարակումը, տպագրումը, թերթերի, ամսագրերի կողմից գովազդային ծառայությունների, տպագրման ծառայությունների մատուցումը

✓ 18 տարեկանը չլրացած անձանց

արվեստի, սպորտի ուսուցման

ծառայությունների մատուցումը

✓ քաղաքային և միջմարզային

տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացումը

(բացի տաքսիներից) ֆիքսված գներով

✓ կրթության, կապի ոլորտում

ծառայությունների տրամադրումը

✓ սերվիտուտի ծառայությունների

անհատույց մատուցումը

✓ ակցիզային դրոշմավորման համար

նախատեսված ծառայությունների մատուցումը այն անձի կողմից, ով ընտրվել է Եկամտների ծառայության կողմից

✓ թափոնների մաքրման և հեռացման

ծառայությունների տրամադրումը տեղական ինքնակառավարման մարմիններին

Առանց հաշվանցման իրավունքի ԱԱՀ-ից ազատվում են նպատակային նշանակությամբ իրականացվող գործարքները հետևյալ օրենքների հիման վրա՝

• նավթի, գազի մատակարարման նպատակով սարքավորումների, տեխնիկայի, մասերի ներմուծումը/մատակարարումը, ծառայությունների մատուցումը՝ համաձայն «Նավթի և գազի մասին» օրենքի

• Վրաստանի միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված արտոնյալ վարկերի հաշվին ֆինանսավորվող ապրանքների ներմուծումը՝

41) ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց կողմից իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

42) օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների և ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը.

43) ապահովագրական և վերաապահովագրական ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

44) կենսաթոշակային ապահովման ծառայությունների, ներառյալ՝ դրանց հետ կապված՝ միջնորդների և գործակալների կողմից ծառայությունների մատուցումը.

45) «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի իմաստով նախաձեռնողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին կամ վաճառողին, վաճառողի կողմից ակտիվների օտարումն արժեթղթավորման հիմնադրամին, նախաձեռնողի կողմից արժեթղթավորման հիմնադրամից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման հիմնադրամի հետ ակտիվների փոխանակումը, ինչպես նաև ակտիվների օտարումը «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված արժեթղթավորման ֆոնդին, արժեթղթավորման ֆոնդին ակտիվն օտարած անձի կողմից արժեթղթավորման ֆոնդից ակտիվների հետգնումը կամ արժեթղթավորման ֆոնդի հետ ակտիվների

նախատեսված էլեկտրաէներգետիկայի ոլորտում վերականգնողական աշխատանքների իրականացման, ինչպես նաև շինարարական, մոնտաժման, վերանորոգման ծառայությունների մատուցման համար

- Բաքու-Թբիլիսի-Ջեյհան և Բաքու-Թբիլիսի-Էրզրում խողովակաշարերի կառուցման՝ Վրաստանի միջազգային պայմանագրերով պարտավորությունների կատարման նպատակով ապրանքների ժամանակավոր ներմուծումը

- ԱԱՀ-ից ազատված ապրանքների ժամանակավոր ներմուծումը

- հետ վերադարձված ապրանքների ներմուծումը

- դրամաշնորհային ծրագրով ապրանքների ներմուծումը

- աղետների վերացման նպատակով ծառայությունների մատուցումը, օտարերկրյա պետությունների կողմից հումանիտար օգնության տրամադրումը

- դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից գույքի ներմուծումը՝ ինչպես պաշտոնական օգտագործման, այնպես էլ անձնական օգտագործման:

Հաշվանցման իրավունքով ԱԱՀ-ից ազատվում են

- ապրանքների վերաարտահանումը
- դիվանագիտական

ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, կողմից պաշտոնական օգտագործման նպատակով ապրանքների մատակարարումը

- «Արտահանում», «Վերաարտահանում», «Ներքին վերամշակում» և «Տարանցում» ընթացակարգերով ձևակերպված

փոխանակումը.

46) բանկերի, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ինչպես նաև սույն կետով սահմանված դեպքերում՝ այլ հարկ վճարողների կողմից ֆինանսական գործարքների ու գործառնությունների կատարումը:

47) Օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են ՀՀ տարածքում.

48) ներդրումային ֆոնդի կողմից անշարժ գույքի օտարումը տվյալ ներդրումային ֆոնդում մասնակցություն ունեցող անձին, եթե անշարժ գույքը նախկինում ներդրումային ֆոնդի կողմից որպես ներդրումային ֆոնդում փայի կամ բաժնետոմսի դիմաց ներդրում ձեռք է բերվել տվյալ անձից.

49) «Անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգի գործողությունը եզրափակելու նպատակով անմաքս առևտրի խանութի կազմակերպչի կողմից այն օտարերկրյա ապրանքների՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծումը, որոնք իրացվել են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 243-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց.

50) ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ-ում գործող անմաքս առևտրի խանութներ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծումը.

ապրանքների տեղափոխությունը և դրանց հետ կապված ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ գործակալական, միջնորդական, տեղեկատվական, փաստաթղթերի պատրաստման, օդային, ծովային նավարկության, դիսպետչերական և այլ ծառայությունների մատուցումը

- երկրի տարածքով օտարերկրյա բեռների և ուղևորների տարանցիկ փոխադրումները և դրանց հետ կապված ծառայությունների մատուցումը

- միջազգային երթուղիներով (օդային և ջրային) թռիչքներ իրականացնող օդանավերի սպասարկման հետ կապված ապրանքների ներմուծումը/մատակարարումը

- բնական գազի մատակարարումը

ջերմաէլեկտրակայաններին

- պետության կամ համայնքի 50 տոկոսից

ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների ակտիվների կազմից գույքի առանձնացումը

- պետությանը կամ համայնքին

ապրանքների և ծառայությունների անհատույց մատակարարումը

- ծրագրեր իրականացնող հանրային

իրավունքի իրավաբանական անձանց կողմից ապրանքների փոխանցումը

- Անմաքս առևտրի խանութին ապրանքների

վաճառքը, ինչպես նաև վերջինիս կողմից ապրանքների վաճառքը

- ԱԱՀ վճարող հանդիսացող

ձեռնարկության կամ դրա՝ինքնուրույն գործող ստորաբաժանման բոլոր ակտիվների

մատակարարումը 1 գործարքի շրջանակներում մյուս ԱԱՀ վճարող հանդիսացող

ձեռնարկությանը, եթե մատակարարմանը հաջորդող 15 օրացուցային օրվա ընթացքում

կողմերը հարկային մարմնին իրազեկում են այդ մատակարարման վերաբերյալ:

- կազմակերպությունների

վերակազմակերպման գործարքները.

- իրավաբանական անձի կանոնադրական

կապիտալում ներդրումները

- օտարերկրյա զբոսաշրջիկներին

տուրիստական փաթեթների տրամադրումը

Վրաստանի տարածքում

ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում են հետևյալ գործարքները.

1) ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարումը.

2) ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություն արտահանված՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի (բացառությամբ սև և գունավոր մետաղների ջարդոնի) մատակարարումը.

3) սույն մասի 1-ին և (կամ) 2-րդ կետերով սահմանված գործարքների հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, բեռնաթափման, ուղեկցման և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

4) բեռների, փոստի և (կամ) ուղևորների փոխադրման՝ միջազգային տրանսպորտային ծառայությունների մատուցումը:

5) վերամշակման նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված կամ վերամշակման նպատակով ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված հումքից ստացված ապրանքի արտահանման դեպքում հումքի վերամշակման աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

6) նորոգման (վերանորոգման) նպատակով «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված կամ նորոգման (վերանորոգման) նպատակով ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծված գույքի արտահանման դեպքում այդ գույքի նորոգման (վերանորոգման) համար օգտագործված պահեստամասերի, դետալների, հանգույցների, այլ լրակազմող տարրերի մատակարարումը՝ նորոգողի (վերանորոգողի)

- մաքսային պահեստ օտարերկրյա ապրանքների մատակարարումը
- լոտոների, ազարտային խաղերի և այլ շահութաբեր խաղերի գծով ծառայությունների մատուցումը այդ խաղերը կազմակերպողի կողմից, եթե այդ ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսը և ավելին պատկանում է պետությանը
- բռնագանձման ձևով պետությանը կամ համայնքին գույքի փոխանցումը
- մինչև արդյունաբերական մշակումը 0207 11 (թարմ և սառեցված տնական հավի կաշի) ծածկագրին դասվող ապրանքների, ինչպես նաև Վրաստանում արտադրված գյուղատնտեսական մթերքների (բացառությամբ 0407 00 190 00 և 0407 00 300 00 ծածկագրերին դասվող ապրանքների (ձու)) մատակարարումը
- տուրիստական ձեռնարկության կողմից հյուրանոցի ակտիվների տրամադրումը այլ անձանց՝ դրանք հետ ստանալու պայմանով: Եթե տուրիստական ձեռնարկությունը 2 տարվա ընթացքում ստանա նույն ակտիվներն անհատույց, ապա այդ գործարքը նույնպես ազատված կլինի ԱԱՀ-ից: Ընդ որում եթե նշված ժամանակահատվածում ընկերության՝ տուրիստական ընկերության կարգավիճակը դադարում է, ապա այդ ընկերությունը համարվում է ԱԱՀ վճարող:
- տուրիստական ընկերության կողմից հյուրանոցային ծառայությունների անհատույց մատուցումը հյուրանոցի սեփականատիրոջ տը 60 օրացուցային օրվանից ոչ ավել:
- Վրաստանում բջջային և ֆիքսված հեռախոսակապով միջազգային զանգերի իրականացումը
- վերամշակման նպատակով վերամշակում իրականացնող անձի կողմից ծառայությունների մատուցումը
- էլեկտրաէներգիայի տրամադրումը, բացի սպառողներին տրամադրումից (սահմանումը նշված է «Էլեկտրաէներգետիկայի և բնական գազի» մասին օրենքում):
- օդային փոխադրումների և ավիացիոն աշխատանքների իրականացումը

կողմից.

7) «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծված ապրանքները ՀՀ ներմուծման մաքսային մարմնից մինչև ՀՀ արտահանման մաքսային մարմին տեղափոխելու հետ ուղղակիորեն կապված աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը.

8) միջազգային երթուղիներով թռիչքներ իրականացնող օդանավերի՝

ա. լիցքավորման համար անհրաժեշտ վառելիանյութի ու ամբողջ երթուղու ընթացքում օդանավերում անձնակազմի և ուղևորների սպառման համար նախատեսվող ապրանքների մատակարարումը.

բ. սպասարկման (ներառյալ ատերոնավիզացիոն, թռիչք-վայրէջքի), նորոգման, վերասարքավորման, միջազգային երթուղիներով փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, բեռների և փոստի սպասարկման աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, փոխադրման ընթացքում ուղևորներին ծառայությունների մատուցումը.

9) այն միջնորդական ծառայությունների մատուցումը, որոնք անմիջականորեն կապված են և ապահովում են սույն մասի 8-րդ կետում նշված ծառայությունների մատուցումը.

10) անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքը միջազգային երթուղիներով մեկնող կամ ժամանող ուղևորներին, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից անմաքս առևտրի խանութում վաճառքի համար նախատեսվող ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին.

11) այն աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, որոնց կատարման վայրը և (կամ) մատուցման վայրը, չի համարվում ՀՀ-ն

- սև և գունավոր մետաղների ջարդոնների մատակարարումը: Այդ ապրանքների մեջ չեն ներառվում 7201, 7102, 7203, 7205, 7206, 7207 և 7204 50 000 00 ծածկագրերին դասվող ծուլվածքները, կիսաֆաբրիկատները

12) ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, դրանց հավասարեցված միջազգային կազմակերպություններին ապրանքների մատակարարումը, նրանց համար աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը:

ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված էլեկտրակապի օպերատորի կամ փոստային կապի օպերատորի կողմից օտարերկրյա համապատասխան օպերատորներին այն ծառայությունների մատուցումը, որոնց մասով, կատարվում է միջազգային փոխկապակցման ծառայությունների շրջանակներում միմյանց մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարների փոխադարձ հաշվարկ:

Վրաստանում գոյություն ունի ԱԱՀ-ի արտոնությունների երկու տեսակ՝

ա) առանց հաշվանցման իրավունքի, բ) հաշվանցման իրավունքով ԱԱՀ-ից ազատում:

ՀՀ-ում գոյություն ունի ԱԱՀ-ի արտոնությունների երկու տեսակ՝

ա) ԱԱՀ-ից ազատում, բ) ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափի կիրառում:

Հիմնական տարբերություններն են՝

- ՀՀ-ում ֆիզիկական անձինք ԱԱՀ չեն վճարում, բացառությամբ եթե ներմուծել են ապրանքներ ձեռնարկատիրական գործունեության նպատակով, մինչդեռ Վրաստանում ֆիզիկական անձանց կողմից իրականացվող ոչ բոլոր գործարքներն են, որ ազատված են ԱԱՀ-ից:

- Վրաստանում ոչ բոլոր գյուղատնտեսական ապրանքներն են, որ ազատված են ԱԱՀ-ից:

- Եթե ՀՀ-ում ԱԱՀ-ից ազատվում են հանձնաժողովի հավանությանն արժանացած դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքների մատակարարումը, ապա Վրաստանում՝ բոլոր տեսակի դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող մատակարարումը:

Վրաստանում ԱԱՀ-ից ազատված են նաև՝

- Ոսկու, արժույթի ներմուծումը

- Բոլոր տեսակի տետրերի, թղթերի, ամսագրերի, գրքերի, տպագրության համար նախատեսված նյութերի մատակարարումը/ներմուծումը, տպագրական, հրատարակչական ծառայությունների մատուցումը,

- Բոլոր տեսակի դեղերի, բժշկական նշանակության տեխնիկայի ու ապրանքների, մանկական սննդի ներմուծումը/ մատակարարումը,

- Ավտոմեքենաների ու մոտոցիկլերի ներմուծումը/ մատակարարումը,

- Բնական գազի ներմուծումը,

- Հողամասերի տրամադրումը,

- Ալցիզային դրոշմավորման համար նախատեսված ապրանքների ներմուծումը/մատակարարումը ու ծառայությունների մատուցումը,

- վիճակախաղերի կազմակերպումը

- բոլոր տեսակի ֆինանսական ծառայությունների մատուցումը

- Եկեղեցիների կառուցման, շինարարական աշխտանքները

- տրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների իրականացումը

- ֆինանսական լիզինգի տրամադրման ծառայությունը, եթե լիզինգի ապրանքն ազատված է ԱԱՀ-ից:

- աղետների վերացման նպատակով ծառայությունների մատուցումը, օտարերկրյա պետությունների կողմից հումանիտար օգնության տրամադրումը:

- ապրանքների հետ վերադարձը:

Վրաստանում հաշվանցման իրավունքով ԱԱՀ-ից ազատված գործարքները և ՀՀ-ում ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքները մեծամասամբ համընկնում են:

Հաշվանցման իրավունքով Վրաստանում ԱԱՀ-ից ազատվում են նաև՝

1) լոտոների, ազարտային խաղերի և այլ շահութաբեր խաղերի գծով ծառայությունների մատուցումը այդ խաղերը կազմակերպողի կողմից, եթե այդ ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսը և ավելին պատկանում է պետությանը,

2) մինչև արդյունաբերական մշակումը 0207 11 (թարմ և սառեցված տնական հավի կաշի) ծածկագրին դասվող ապրանքների, ինչպես նաև Վրաստանում արտադրված գյուղատնտեսական մթերքների (բացառությամբ 0407 00 190 00 և 0407 00 300 00 ծածկագրերին դասվող ապրանքների (ծու)) մատակարարումը,

3) Վրաստանում բջջային և ֆիքսված հեռախոսակապով միջազգային զանգերի իրականացումը:

Վրաստանում սահմանված է, որ ԱԱՀ-ից ազատված է տուրիստական ընկերության կողմից հյուրանոցի ակտիվների տրամադրումը այլ անձանց՝ դրանք հետ ստանալու պայմանով: Եթե տուրիստական ընկերությունը 2 տարվա ընթացքում ստանա նույն ակտիվներն անհատույց, ապա այդ գործարքը նույնպես ազատված կլինի ԱԱՀ-ից: Ընդ որում եթե նշված ժամանակահատվածում ընկերության՝ տուրիստական ընկերության ունեցած կարգավիճակը դադարում է, ապա այդ ընկերությունը դառնում է ԱԱՀ վճարող:

Եվ ՀՀ-ում և Վրաստանում օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայություններն ազատված են ԱԱՀ-ից:

ԱԱՀ-ի հաշվարկների ներկայացումը և ԱԱՀ-ի վճարումը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1. ԱԱՀ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:</p> <p>2. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձը՝ հարկման օբյեկտ համարվող գործարք իրականացնելու դեպքում այդ գործարքի իրականացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ թղթային եղանակով հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ:</p> <p>3. Սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկային հաշիվ դուրս գրողը հարկային հաշվի դուրս գրման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ:</p> <p>4. ԱԱՀ վճարողները ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ:</p> <p>5. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ապրանքների բաց թողնումը:</p> <p>6. ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար ԱԱՀ-ի</p>	<p>1. Որպես ԱԱՀ վճարող հաշվառված անձինք մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը հարկային մարմին են ներկայացնում ԱԱՀ-ի հաշվարկներ: ԱԱՀ-ի գումարի վճարումը կատարվում է նույն ժամանակահատվածում:</p> <p>2. Որպես ԱԱՀ վճարող հաշվառված անձինք պարտավոր են դատարանի կողմից տվյալ ընկերությանը սնանկ ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում հարկային մարմին ներկայացնել մինչև սնանկության վարույթի սկիզբն ընդգրկող ժամանակահատվածի համար չներկայացված հաշվարկները: Ընդ որում սնանկության վարույթը սկսելուց հետո հաշվարկներ չի ներկայացնում:</p> <p>3. Ժամանակավոր ներմուծման դեպքում ԱԱՀ-ն որպես ԱԱՀ վճարող չհաշվառված անձանց կողմից վճարվում է յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ, իսկ ԱԱՀ-ի վերջին վճարումը պետք է իրականացվի «Ժամանակավոր ներմուծում» ընթացակարգի եզրափակման օրը:</p> <p>4. Որպես ԱԱՀ վճարող հաշվառված անձինք ժամանակավոր ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հաշվարկման պարտավորություն չեն կրում: Ընդ որում, այդ դեպքում համարվում է, որ այդ ապրանքների գծով նրանց կողմից իրականացվել է ԱԱՀ-ի հաշվանցում:</p> <p>5. Արտաքին տնտեսական գործունեության ազգային ապրանքների անվանացանկի 8401-9033 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի վճարումն իրականացվում է ապրանքների բաց թողումից հետո 45-րդ օրվանից ոչ ուշ:</p> <p>6. Հետադարձ հարկման դեպքում հարկային գործակալները պարտավոր են ԱԱՀ-ի գումարները վճարել հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ից</p>

գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ոչ ուշ:

ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված է նաև ԱԱՀ գումարների վճարման ժամկետի հետաձգում:

Վրաստանում մի շարք տրանսպորտային միջոցների ներմուծման դեպքում սահմանված է ԱԱՀ-ի վճարման այլ ժամկետներ (բացթողումից հետո 45 օրվա ընթացքում):

Եվ ՀՀ-ում և Վրաստանում ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

ԱԱՀ-ի գումարների վերադարձ

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>1 Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով առաջացող ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարն ուղղվում է հաշվետու ժամանակաշրջանների գործունեության արդյունքներով ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներով առաջացող՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների, ինչպես նաև ստուգման կամ ուսումնասիրության արդյունքում արձանագրվող՝ ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների մարմանը:</p> <p>2 Եթե յուրաքանչյուր հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է միասնական հաշվին:</p> <p>3 ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքների ու գործառնությունների իրականացման դեպքում ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները ԱԱՀ վճարողի գրավոր դիմումի հիման վրա ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում են միասնական հաշվին, եթե հարկ վճարողն ունի ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար:</p>	<p>1. Եթե հարկ վճարողի վճարած ԱԱՀ-ի գումարները գերազանցում են հաշվարկված ԱԱՀ-ի գումարները, ապա հարկ վճարողի պահանջի դեպքում 1 ամսվա ընթացքում վերադարձվում է ավել վճարված հարկերը:</p> <p>2. Օտարերկրյա քաղաքացիների կողմից Վրաստանի տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում նրանց կողմից վճարված ԱԱՀ գումարները հետ են վերադարձվում: ԱԱՀ գումարները հետ են վերադարձվում ապրանքների լիազորված վաճառողների կողմից դուրս գրված հատուկ ստացականի հիման վրա: ԱԱՀ գումարները հետ են վերադարձվում, եթե ապրանքները դուրս են բերվում Վրաստանի տարածքից ապրանքները ձեռք բերելուց 3 ամսվա ընթացքում և ձեռք բերված ապրանքների արժեքը յուրաքանչյուր ստացականում գերազանցում է 200 լարին: ԱԱՀ գումարների հետ վերադարձման կարգը, չափանիշները (որոնց պետք է բավարարեն լիազորված վաճառողները), ինչպես նաև ապրանքների ցանկը, որոնց վրա սույն հոդվածի գործողությունը չի տարածվում, սահմանում է Ֆինանսների նախարարը:</p>

4 Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց գների մեջ ներառված և ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի գումարները հետ են փոխհատուցվում են, եթե օտարերկրյա անձանց կողմից տվյալ հարկ վճարողից մեկ օրացուցային օրվա ընթացքում ԱԱՀ վերադարձի հաշվով ձեռք բերված ապրանքների արժեքը (ներառյալ ԱԱՀ-ն) կազմում է առնվազն 50.000 դրամ և եթե այդ ապրանքներն արտահանվում են ՀՀ տարածքում օտարերկրյա անձանց կողմից դրանց ձեռքբերմանը հաջորդող 90 օրվա ընթացքում և եթե մինչև ապրանքների արտահանումը դրանք չեն օգտագործվել և ունեն գործարանային փաթեթավորում և (կամ) պիտակավորում:

Եթե ՀՀ-ում փոխհատուցվող գումարները կամ ուղղվում են վճարման ենթակա գումարների մարմանը կամ մուտքագրվում են միասնական հաշվին, ապա Վրաստանում դրանք հետ են վերադարձվում:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից ձեռք բերված ապրանքների արտահանման դեպքում դրանց համար վճարված ԱԱՀ-ի գումարների հետ վերադարձման կարգն ու չափանիշները 2 երկրներում գրեթե չեն տարբերվում:

Վրաստանյան այլ առանձնահատկություններ

Վրաստանում սահմանված են նաև հետևյալ առանձնահատկությունները՝

Հեղադարձ հարկում

ԱԱՀ-ով հետադարձ հարկման ենթակա են՝

- ծառայությունները, որոնք մատուցվում են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից (բացառությամբ Վրաստանի քաղաքացիներից) կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից հարկային գործակալներին: Այս դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում է ծառայության արժեքի նկատմամբ
- պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց ապահովման առարկայի հանձնումը վարկատուին ապահովման առարկայի շուկայական արժեքի նկատմամբ
- Վրաստանի տարածքից դուրս հարկային գործակալներին ծառայությունների մատուցումը, կամ ինտերնետով ապրանքների մատակարարումը: Այս դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում է ծառայության արժեքի նկատմամբ

▪ օտարերկրյա ապրանքները, որոնք ձեռք են բերվել մաքսային պահեստից «Ներմուծում» ընթացակարգով ձևակերպելիս: Եթե ապրանքի ներմուծումն ու իրացումն ազատված չեն ԱԱՀ-ից, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է մաքսային պահեստից ձեռք բերման արժեքի և ներմուծման արժեքի դրական տարբերության նկատմամբ: Իսկ եթե ապրանքի ներմուծումն ազատված է ԱԱՀ-ից, ապա իրացումը հարկվում է ԱԱՀ-ով, որը հաշվարկվում է մաքսային պահեստից ձեռք բերման արժեքի նկատմամբ:

Խառը գործարքները

Խառը գործարք է համարվում ապրանքների և ծառայությունների համակցված մատակարարումը:

Այն ապրանքների մատակարարումը, որոնք օժանդակում են հիմնական ապրանքների մատակարարմանը, համարվում են այդ ապրանքների մի մասը: Այն ծառայությունների մատուցումը, որոնք օժանդակում են հիմնական ապրանքների ներմուծմանը, համարվում են այդ ապրանքների ներմուծման մի մասը:

Հողի և դրա վրա տեղակայված շենքերի ու շինությունների իրացման գործարքները միասին համարվում են հողի և շենքերի ու շինությունների իրացում:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Հարկ վճարողները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>Ենթակցիզային ապրանքներ (կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը)՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Արտադրողները, 2) Ներմուծողները, 3) ավտոգազալիցքավորման ճնշակայանում սեղմված բնական գազի մատակարարները: 	<p>Ենթակցիզային ապրանքներ (կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը)՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Արտադրողները, 2) Ներմուծողները, 3) Արտահանողները, 4) Ավտոտրանսպորտային միջոցների համար նախատեսված բնական գազի և բնական գազային կոնդենսատի մատակարարները, 5) Միջազգային զանգերի ծառայություններ մատուցողները:

Ի տարբերություն ՀՀ-ի, Վրաստանում ակցիզային հարկ վճարողներ են համարվում նաև ակցիզային հարկով հարկման ապրանքներ արտահանողները և միջազգային էեկտրակապի (հեռախոսազանգերի մասով) ծառայություններ մատուցողները:

Հարկման օբյեկտը

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<p>Ակցիզային հարկով հարկման ենթակա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ապրանքների մատակարարումը, 2) Ներմուծումը 	<p>Ակցիզային հարկով հարկման ենթակա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ապրանքների մատակարարումը, 2) Ներմուծումը,

	3) Արտահանումը:
--	-----------------

Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում ակցիզային հարկով հարկման օբյեկտ է համարվում նաև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանումը:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները

ՀԱՅԱՍՏԱՆ	ՎՐԱՍՏԱՆ
<ol style="list-style-type: none"> 1. Էթիլային սպիրտը (բացառությամբ կոնյակի սպիրտի). 2. Սպիրտային խմիչքները. 3. Գարեջուրը. 4. Գինին. 5. Ծխախոտի արտադրանքը (այդ թվում՝ ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարելաները). 6. Քսայուղը. 7. Բենզինը. 8. Դիզելային վառելիքը. 9. Հում նավթը. 10. Նավթամթերքները. 11. Նավթային գազերը. 12. Գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի). 13. Սեղմված բնական գազը: 	<ol style="list-style-type: none"> 1. Էթիլային սպիրտը սպիրտային խմիչքներ. 2. Սպիրտային խմիչքները. 3. Գարեջուրը. 4. Ծխախոտի արտադրանքը. 5. Քսայուղը, յուղեր. 6. Բենզինը. 7. Դիզելային վառելիքը. 8. Հում նավթը. 9. Նավթամթերքները. 10. Նավթային գազերը. 11. Գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի). 12. Բնական գազի և բնական գազային կոնդենսատի. 13. Ավտոմոբիլ և մոտոցիկլետ. 14. Միջազգային զանգերի ծառայություններ, 15. Վառելիքների հավելանյութեր, լուծիչներ, հակադետոնատոր, 16. Էլեկտրոնային ծխախոտների համար կիրառվող հեղուկ:

Վրաստանում ակցիզային հարկով հարկվում են նաև՝

- Ավտոմոբիլը և մոտոցիկլետը,
- Միջազգային զանգերի ծառայությունները,
- Վառելիքների հավելանյութերը, լուծիչները, հակադետոնատորները,
- Էլեկտրոնային ծխախոտների համար կիրառվող հեղուկները:

Միաժամանակ, Վրաստանում ակցիզային հարկով չեն հարկվում գինիները:

Բացի այդ, Վրաստանում ԱՏԳ ԱԱ որոշ դասերին պատկանող ապրանքների մասով այդ ապրանքների ենթադասերի ավելի մեծ քանակ է հարկվում ակցիզային հարկով:

Ակցիզային հարկի դրույքաչափերը

Գարեջուր (2203)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	30 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 105 դրամ	1 լիտր	0.6 լարի (114 դրամ)	0.6 լարի (114 դրամ)	0.12 լարի (1% սպիրտի հաշվարկով) (22.8 դրամ)

Վրաստանում 5% սպիրտի հաշվով 1 լիտրի համար գանձվում է 114 դրամ, իսկ ՀՀ-ում՝ ոչ պակաս 105 դրամից: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.08 անգամ ավել բարձր է: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հաշվարկների համար հիմք է հանդիսացել ՀՀ նվազագույն դրույքաչափը՝ արժեքի վերաբերյալ տվյալների բացակայությամբ պայմանավորված:

Խաղողի գինիներ (2204), Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ (2205), Պորդային, հափապորդային, մրգային և այլ գինիներ (2206)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	(2204) 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 100 դրամ	Չեն հարկվում			
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	(2205) 50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 750 դրամ	Չեն հարկվում			

լիտր		
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	(2206) 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 100 դրամ	Չեն հարկվում

Ի տարբերուն Հայաստանի, գինիները Վրաստանում չեն հարկվում ակցիզային հարկով:

Խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (փանձի սիդր), մեղրաըմպելիք), բացառությամբ պրոլային, հափապրոլային գինիների և գինենյութի

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	25 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 270 դրամ	1 լիտր	5 լարի (950 դրամ)	5 լարի (950 դրամ)	մինչև 5 տոկոս սպիրտի պարունակությամբ՝ 0.6 լարի (114 դրամ) 5 տոկոս և ավելի սպիրտի պարունակությամբ՝ 5 լարի (950 դրամ)

Էթիլային սպիրտ 2207

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման	Ակցիզային	Հարկման	2016թ.	2017թ.	2018թ.

բազայի միավորը	հարկի դրույքաչափը (դրամ)	բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 900 դրամ	1 լիտր	10 լարի (1900 դրամ)	10 լարի (1900 դրամ)	7.5 լարի (1425 դրամ) (1 լիտր 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)

Վրաստանում 100% սպիրտի հաշվով 1 լիտրի համար գանձվում է 1425 դրամ, իսկ ՀՀ-ում՝ 900 դրամից ոչ պակաս: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.6 անգամ բարձր է:

Ինչպես արդեն նշվել է, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հաշվարկների համար հիմք է հանդիսացել ՀՀ նվազագույն դրույքաչափը՝ արժեքի վերաբերյալ տվյալների բացակայությանը պայմանավորված:

Սպիրտային խմիչքներ (2208)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
Սպիրտային խմիչքներ 2208 (բացառությամբ 2208 90, 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0, 2208 20, 2208 30, 2208 40)		Ջին 2208 50			
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	73 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 725 դրամ	1 լիտր	15 լարի (2850 դրամ)	15 լարի (2850 դրամ)	22.5 լարի (4275 դրամ) (1 լիտր 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)

		Լիկյոր 2208 70 2208 90 330 00, 2208 90 380 00, 2208 90 480 00, 2208 90 710 00 ծածկագրերին դասվող սպիրտային խմիչքներ			
		1 լիտր	9.2 լարի (1748 դրամ)	9.2 լարի (1748 դրամ)	22.5 լարի (4275 դրամ) (1 լիտր 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)
Պտուղներից և (կամ) հատապտուղներից պատրաստված օղի 2208 90 330 0, 2208 90 380 0, 2208 90 480 0		Օղի 2208 60 2208 ծածկագրին դասվող սպիրտային այլ խմիչքներ			
1 լիտր	1 լիտրի համար՝ 800 դրամ	1 լիտր	10 լարի (1900 դրամ)	10 լարի (1900 դրամ)	15 լարի (2850 դրամ) (1 լիտր 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)
Կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թրմեր 2208 20		Սպիրտային թրմեր՝ ստացված խաղողի գինու թորման արդյունքում կամ խաղողի ճզմամբ 2208 20			
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար ըստ հնեցման ժամկետի 1) 1-3՝ 3000դ. 2) 4-5՝ 3500դ. 3) 6-10՝ 6000դ. 4) 11-15՝ 8500դ. 5) 16-19՝ 14000դ. 6) 20 և ավելի՝ տարի 22000 դրամ	1 լիտր	9.2 լարի (1748 դրամ)	9.2 լարի (1748 դրամ)	15 լարի (2850 դրամ) (1 լիտր 100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)

Վիսկի		Վիսկի			
2208 30		2208 30			
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	66 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 3970 դրամ	1 լիտր	15 լարի (2850 դրամ)	15 լարի (2850 դրամ)	22.5 լարի (4275 դրամ)
Ռոմ և այլ սպիրտային թրմեր		Ռոմ և այլ սպիրտային թրմեր			
2208 40		2208 40			
արժեք կամ մաքսային արժեք կամ ձեռքբերման արժեք կամ 1 լիտր	66 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար՝ 3970 դրամ	1 լիտր	15 լարի (2850 դրամ)	15 լարի (2850 դրամ)	22.5 լարի (4275 դրամ)

Ջինի և լիկյորի համար Վրաստանում 100% սպիրտի հաշվով 1 լիտրի համար գանձվում է 4275 դրամ, իսկ ՀՀ-ում՝ 2266 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.9 անգամ բարձր է: *(ՀՀ-ում 100% սպիրտի հաշվով դրույքաչափի հաշվարկի համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ 2208 դասին պատկանող այլ սպիրտային խմիչքների մեջ սպիրտի պարունակությունը 32 % է):*

Օղու համար Վրաստանում 100% սպիրտի հաշվով 1 լիտրի համար գանձվում է 2850 դրամ, իսկ ՀՀ-ում՝ 2500 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.1 անգամ բարձր է:

Կոնյակի համար Վրաստանում 100% սպիրտի հաշվով 1 լիտրի համար դրույքաչափը 2850 դրամ, իսկ ՀՀ-ում՝ ըստ հնեցման ժամկետի

- 1) 1-3 տարի՝ 3000դ.
- 2) 4-5 տարի՝ 3500դ.
- 3) 6-10 տարի՝ 6000դ.
- 4) 11-15 տարի՝ 8500դ.

5) 16-19 տարի՝ 14000դ.

6) 20 և ավելի տարի՝ 22000 դրամ:

Արդյունքում ՀՀ-ում դրույքաչափը ըստ հնեցման ժամկետների բարձր է, մասնավորապես՝

1) 1-3 տարի՝ 1.05 անգամ,

2) 4-5 տարի՝ 1.23 անգամ,

3) 6-10 տարի՝ 2.1 անգամ,

4) 11-15 տարի՝ 2.9 անգամ,

5) 16-19 տարի՝ 4.9 անգամ,

6) 20 և ավելի՝ տարի 7.7 անգամ:

Վիսկիի և ռոմի համար Վրաստանում 100% սպիրտի հաշվով 1 լիտրի համար դրույքաչափը կազմում է 4275 դրամ, իսկ ՀՀ-ում՝ 12 400 դրամից ոչ պակաս, արդյունքում ՀՀ-ում դրույքաչափը 2.9 անգամ բարձր է: ՀՀ-ում 100% սպիրտի հաշվով դրույքաչափի հաշվարկի համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ վիսկիի և ռոմի մեջ սպիրտի առավելագույն պարունակությունը 32 % է:

Մարդատար մեքենաներ (8703)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
Չեն հարկվում		1 սմ ³ շարժիչի ծավալ	Կախված նաև արտադրման տարեթվերից (լարի)		
		Մինչև 1 տարի	1.5	1.5	1.5
		1 տարի	1.4	1.5	1.5
		2 տարի	1.3	1.5	1.5
		3 տարի	1.2	1.4	1.4
		4 տարի	1.0	1.2	1.2
		5 տարի	0.7	1.0	1.0

	6 տարի	0.5	0.8	0.8
	7 տարի	0.5	0.8	0.8
	8 տարի	0.5	0.8	0.8
	9 տարի	0.5	0.9	0.9
	10 տարի	0.5	1.1	1.1
	11 տարի	0.5	1.3	1.3
	12 տարի	0.5	1.5	1.5
	13 տարի	0.6	1.8	1.8
	14 տարի	0.7	2.1	2.1
	14 և ավելի տարիներ	0.8	2.4	2.4

Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում ալցիզային հարկով հարկվում են նաև մարդատար մեքենաները:

Մոտոցիկլետներ (8711)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ալցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ալցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ալցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ալցիզային հարկի դրույքաչափը (լարի)
Չեն հարկվում		1 սմ ³ շարժիչի ծավալ	Կախված նաև արտադրման տարեթվերից (լարի)		
		Մինչև 1 տարի			1.5
		1 տարի			1.3
		2 տարի			0.7
		3 տարի			0.7
		4 տարի			0.7
		5 տարի			0.7
		6 տարի			0.8

	7 տարի			0.8
	8 տարի			0.8
	9 տարի			0.8
	10 տարի			1.0
	11 տարի			1.3
	12 տարի			1.5
	13 տարի			1.8
	14 տարի			2.1
	14 և ավելի տարիներ			2.4

Ի տարբերություն Հայաստանի, Վրաստանում ակցիզային հարկով հարկվում են նաև մոտոցիկլետները:

Հում նավթ և նավթամթերք (2709), գազի բնական կոնդենսատ

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1 տոննա	27000	1000 մ ³	80 լարի (15 200 դրամ)	200 լարի (38 000 դրամ)	200 լարի (38 000 դրամ)

Վրաստանում 1 տոննայի հաշվով դրույքաչափը կազմում է 38 000 դրամ, իսկ ՀՀ-ում՝ 27 000 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.4 անգամ բարձր է:

Հաշվարկի համար նավթի խտությունը ընդունվել է, որ 1 կգ/մ³ է:

Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը	2017թ. Ակցիզային հարկի դրույքա-	2018թ. Ակցիզային հարկի դրույքա-

	(դրամ)		(լարի)	չափը (լարի)	չափը (լարի)
1 տոննա	1000	1 տոննա	120 լարի (22 800 դրամ)	120 լարի (22 800 դրամ)	120 լարի (22 800 դրամ)

Վրաստանում 1 տոննայի հաշվով դրույքաչափը կազմում է 22 800 դրամ, իսկ Հայաստանում 1000 դրամ:

Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 22.8 անգամ բարձր է:

Սեղմված բնական գազ

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1000 մ ³	25 000 դրամ	1000 մ ³	80 լարի (15 200 դրամ)	200 լարի (38 000 դրամ)	200 լարի (38 000 դրամ)

Վրաստանում 1000 մ³ հաշվով դրույքաչափը կազմում է 38 000 դրամ, իսկ Հայաստանում 25 000 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.52 անգամ բարձր է:

Դիզելային վառելիք (բացառությամբ բենզինի և քսայուղերի)

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1 տոննա	13 000 դրամ	1 տոննա	150 լարի (1748 դրամ)	400 լարի (76 000 դրամ)	400 լարի (76 000 դրամ)

Վրաստանում 1 տոննայի հաշվով դրույքաչափը 76 000 դրամ, իսկ Հայաստանում 13 000 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 5.8 անգամ բարձր է:

Բենզին

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1 տոննա	40000 դրամ	1 տոննա	250 լարի (47 500 դրամ)	500 լարի (95 000 դրամ)	500 լարի (95 000 դրամ)

Վրաստանում 1 տոննայի հաշվով դրույքաչափը կազմում է 95 000 դրամ, իսկ Հայաստանում 40 000 դրամ: Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 2.4 անգամ բարձր է: գումար Բենզին առանձին Վրաստանի Օրենսգրքի ակցիզային դրույքաչափերում բերված չէ, հիմք է ընդունվել մեր ԱՏԳ ԱԱ համապատասխան ծածկագիրը

Քսայուղեր

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
բացթողնման գին կամ 1 կգ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք կամ 1 կգ	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կգ համար՝ 400 դրամ	1 տոննա	400 լարի (76 000 դրամ)	400/800 լարի	800 լարի (152 000 դրամ)

Վրաստանում 1 տոննայի հաշվով դրույքաչափը կազմում է 152 000 դրամ, իսկ Հայաստանում 400 000 դրամ: Արդյունքում Հայաստանում դրույքաչափը 2.6 անգամ բարձր է:

Հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ նվազագույն դրույքաչափը:

Ծխախոտի արտադրանք

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
ԱՄԳ կամ կամ 1000 հատ	15 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1000 հատի համար՝ 7275 դրամ	20 հատ	Ֆիլտրով 1.1 լարի (209 դրամ)	Ֆիլտրով 1.7 լարի (323 դրամ)	Ֆիլտրով 1.7 լարի (323 դրամ)
			Առանց ֆիլտրի 0.3 լարի (57 դրամ)	Առանց ֆիլտրի 0.6 լարի (114 դրամ)	Առանց ֆիլտրի 0.6 լարի (114 դրամ)

Ֆիլտրով ծխախոտի դեպքում 1 հատի հաշվարկով դրույքաչափը ՀՀ-ում 7,3 դրամ է, իսկ Վրաստանում 16.1 դրամ:

Արդյունքում՝ Վրաստանում դրույքաչափը 2.2 անգամ բարձր է:

Առանց ֆիլտրի ծխախոտի դեպքում 1 հատի հաշվարկով դրույքաչափը Հայաստանում 7,3 դրամ է, իսկ Վրաստանում 5.7 դրամ է: Արդյունքում Հայաստանում դրույքաչափը 1.2 անգամ բարձր է:

Սիգարներ

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1000 հատ	605 000 դրամ	1 հատ	1.3 լարի (247 դրամ)	1.9 լարի (361 դրամ)	1.9 լարի (361 դրամ)

Վրաստանում 1 հատի հաշվով դրույքաչափը 361 դրամ, իսկ Հայաստանում 605 դրամ:

Արդյունքում Հայաստանում դրույքաչափը 1.7 անգամ բարձր է:

Սիգարետլա

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1000 հատ	16 500 դրամ	20 հատ	1.5 (285 դրամ)	2.2 (418 դրամ)	2.2 (418 դրամ)

Վրաստանում 1 հատի հաշվով դրույքաչափը 20.9 դրամ, իսկ Հայաստանում 16.5 դրամ:

Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 1.3 անգամ բարձր է:

Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
1 կգ	1500 դրամ	Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ			
			2403 11 000 00,		
			2403 19 000 00,		
			2403 99 100 00		
		1 կգ	25 լարի (4750 դրամ)	35 լարի (6650 դրամ)	35 լարի (6650 դրամ)
		Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ			
			2403 99 900 01		
			2403 99 900 02		
		20 հատ		1.7 լարի	1.7 լարի

				(323 դրամ)	(323 դրամ)
		Էլեկտրոնային սիգարետների համար կիրառվող հեղուկ			
		3824 90 980 01			
		1 մլ		0.2 լարի (38 դրամ)	0.2 լարի (38 դրամ)

Վրաստանում 1 կիլոգրամի հաշվով դրույքաչափը կազմում է 6650 դրամ, իսկ Հայաստանում 1500 դրամ:

Արդյունքում Վրաստանում դրույքաչափը 4.4 անգամ բարձ է:

Յուղեր և քարածխային ձյութի բարձր ջերմային թորման այլ նյութեր

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
Չեն հարկվում		1 տոննա	350 լարի (66500 դրամ)	350 լարի (66500 դրամ)	350 լարի (66500 դրամ)
Կարծես ՀՀ-ում հարկվում է բնապահպանական հարկով					

Վառելիքի հավելանյութ, լուծիչներ, հակադեպոնապորներ

ՀԱՅԱՍՏԱՆ		ՎՐԱՍՏԱՆ			
Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ)	Հարկման բազայի միավորը	2016թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2017թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)	2018թ. Ակցիզային հարկի դրույքաչափը (լարի)
Կարծես ՀՀ-ում հարկվում է բնապահպանական հարկով		1 տոննա	400 լարի (76000 դրամ)	400 լարի (76000 դրամ)	400 լարի (76000 դրամ)

7. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Դավիթ Անանյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը

20.02.2018թ.